№ 3—4 (216) XXI ՏԱՐԻ ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ 1911

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐՇԱԻԸ ԵՒ ԹԻՒՐՔԻՈՅ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

I

Օսմանեան թատերաբեմի վրայ խաղացուում են վերին աստիճանի ծանրակշիռ անցքեր, որոնք կարող են վաղ թէ ուշ հզօրապէս անդրադառնալ թէ միջազգային խաղաղութեան, թէ Թիւրքիոյ ամբողջութեան և թէ մեր հայկական ճակատագրի վրայ։

Միմիայն Եմենն ու Ալբանիան չեն — ուրիշ կարգի պրօբլեմներ կան, նեազ շառաչուն, աղմկայոյզ, բայց թերևս աւելի ահաւոր։ Երկաթուղային, տեխնիկական ձեռնարկների թափանցիկ վաթագոյրի ետև՝ ամբողջ „եւրոպական հաւասարակշռութեան" խնդիրն է դրուած՝ իր արիւնոտ ու սարսափեցնող հեռապատկերով։ Գուցէ նաև—ամբողջ „թիւրքական խնդիրը"...

Այդ վատաբախտ երկիրը, որ ազատելով Աբդիւլ-Համիդեան տարտարոսից, թուում էր նաև ազատած միջազգային դիւանագիտութեան որոգայթներից—այսօր տակաւին շարունակում է իր վաղեմի, աննախանձելի պաշտօնը... Նա տակաւին հինաւուրց „կուռախնծորն" է —չարաբաստիկ և հրապուրիչ—նա դեռ ևս „հիւանդ մարդն" է, ինչպէս Նիկոլայ I-ի օրով, որ աւել է նրան այդ ճակատագրական անունը։

Դաւեր—ներսում և դրսում։ Դաւեր երկրի ամբողջութեան դէմ, պարբերական բռնկումներ, կենտրօնախոյս ձգտումների յաւիտենական ճարակում—այժմ արդէն մահմեդական հպատակ տարրերի մէջ—և պետութիւնների անհատնում ու տենդային մրցակցութիւն՝ նոյն համեղ պատառի շուրջը։

Այո։ Մի մեծ ոստիւն անելուց յետոյ, մեզ թուում է առաջին վայրկեաններում, թէ ճողոպրեցինք միանգամ ընդմիշտ վտանգներից ու տագնապներից, բայց անցքերը գալիս են կրկին ու կրկին յուզելու մեր մտքի անդորրութիւնը, կրկին ու կրկին դնելու մեր առջև—մեր հաւաքական և հարազատ հայրենիքի առջև — համլէտեան չարատանջ հարցը։

To be, or not to be?...

Ինչպէ՞ս „լինել"։ Ինչպէ՞ս „չը լինել"... Աւելի բան երբ և իցէ պարտաւոր ենք ուշի ուշով անդրադառնալ կացութեան վրայ, հետևել գահավիժուող դրամայի ելևէջներին և մշակել ազգային բանաւոր քաղաքականութեան հիմքերը։

Ո՞րն է ճշմարտագոյն մարգարէն — լաւատե՞սը, թէ յոռետեսը։

Երկուսն էլ կան։ Մէկի աչքին քաղաքական հորիզօնը պատկերանում է անամպ, յստակ, ապահով։ Միւսը, ընդհակառակը, տեսնում է չարագուշակ ամպերի հսկայական կուտակումներ — մասնաւորապէս տաճկաստան Արևելքում, ուսկից և սպասում է փոթորկաձայն զօղանջը...

Երկուսն էլ կարող են բերել—իրենց թեզը պաշտպանելու համար — հիմնաւոր պատճառաբանութիւն։ Բայց երկուսի հանդէպ՝ դուք ակամայ տալիս էք գերակշռութիւնը յոռետեսին, դուք աւելի հակամէտ էք ընդունելու նրա փոքր ինչ մելամաղձոտ ու տխրաշունչ պատճառաբանութիւնը և մանաւանդ նրա հրամայական պատուիրանը.

— Ազգե՞ր, մի՛ տարուէք յոյսերով ու պատրանքներով, մի՛ մատնուէք անհոգ ու մեղկ անդորրութեան, չ՞ը պահեցէք ձեր վառօդը...

Արդարև։ Մինչդեռ սիր Էդուարդ Գրէյ—անգլիական արտ. գործ. մինիստրը—ազդարարում է իրաւարարաաեաննների (arbitrage) անհրաժեշտութիւնը, մինչդեռ երկու մեծ երկիրները — Մեծ Բրիտանիան և Հիւսիս-ամերիկեան Հանրապետութիւնը — հանդիսաւոր համաձայնութիւն են կնքում՝ իրաւախոհութեամբ լուծելու իրենց մէջ ծագելիք կնճիռները, մինչդեռ ամբողջ քաղաքակիրթ ու ռամկավար մարդկութիւնը եռանդագին ծափահարում է այդ բերկրալի անակնկալին և պահանջում նրա տարածումը ամենուրեք, — հզօր ու գոռոզ Ցեւտոնը, իր բիսմարկեան ռազմամոլութեան անշէջ կրակով և իր պոզպատեայ, զրահաւորուած լեգէօններով՝ շարունակում է *Drang nach Osten*-ի աւանդական քաղաքականութիւնը— միանգամայն գիշատիչ և գրգռիչ, նաճողական և անհաշտ — որով յարաժամ բորբոքում է միւս կապիտալիստ պետութիւնների — մասնաւորապէս Անգլիայի—ախորժակները, հրաւիրելով նրանց դէպի բնական ինքնապաշտպանութիւն...

մի ինքնապաշտպանութիւն՝ որ կարող է ի հարկին վերածուիլ նախայարձակի և հրդեհել ու բոցավառել ընդարձակ հորիզոններ...

Մի քանի տարի առաջ, Էդուարդ VII-ի և Դելկասսէի ջանքերով, առաջ եկաւ Անգլիայի և Ֆրանսիայի միջև հռչակաւոր „մտերմական համաձայնութիւնը“ — entente cordiale — որով երկու շահագրգռուած երկիրները նպատակ ունէին թումբ դնել Գերմանիայի յառաջխաղացութեան դէմ։ Քիչ յետոյ նրանց միացաւ Ռուսաստանը և կազմակերպուեց եռեքպետեան համաձայնութիւնը... ուղղուած բացարձակօրէն նոյն Գերմանիայի ախորժակների դէմ։ Վերջինը մի վայրկեան շփոթուեց։ Նրա արևելեան հոյակապ ծրագիրներն ու ձեռնարկները — տնտեսական և միանգամայն ռազմական — զարնւում էին խոչընդոտի։ Վիլհելմ II-ին առանձնապէս մտատանջ արեց Ռուսաստանի կողմնակցութիւնը հակագերման համաձայնութեան։

Այնուհետև, սակայն, նոր քամիներ փչեցին, ցարի կառավարութիւնը մէկէն ի մէկ փոխեց ֆրոնտը, և ահա Պոտսդամի — այժմից պատմական — տեսակցութեան մէջ խախտուեց եռեքպետեան համաձայնութիւնը կամ թէ ստացաւ յամենայն դէպս անդարմանելի հարուած։ Ռուս-գերմանական յարաբերութիւնները ընդունեցին մի անսովոր մտերմութիւն... ի վնաս Ֆրանսիայի և Անգլիայի բարեկամութեան։ Եւ գերմանական արշաւը դրանով մի նոր ու ահագին թռիչք արեց դէպի իր նպատակավայրը...

Պետերբուրգի կաբինետը այդպիսով մի աւելորդ ապացոյց տուեց իր նենգամիտ քաղաքականութեան։ Արտաքին գործերի նոր մինիստր Սազոնովը իր տիրոջ հետ Բերլին մեկնելիս, ազդարարում էր բարձրաձայն, թէ երկու կայսեր տեսակցութեան ու խորհրդակցութեան առարկան է — Պարսկաստանը։ Շուտով, սակայն, պարզուեց, որ ուրիշ աւելի „հետաքրքրական“ հարցեր ևս նիւթ են եղել Պոտսդամի վիճաբանութեան։ Վերջինը վերածւում է հետևեալ փոխադարձ յանձնառումներին.

Գերմանիան ընդունում է Ռուսաստանի յատուկ ու գերակշռող շահերը — տնտեսական և ռազմական (stratégique) — հիւսիսային Պարսկաստանում։ Դրա փոխարէն Ռուսաստանը ազատ ասպարէզ է տալիս Գերմանիային՝ նրա „արևելեան արշաւի“, կամ ուրիշ խօսքով՝ Բաղդադեան երկաթուղու հսկայ ձեռնարկի մէջ... մէկ պայմանով միայն՝ որ այդ ձեռնարկը և առհասարակ գերմանական ծրագիրների ցանցը չատ չը տարածուին դէպի Ռուսաստանի աւանդական „ազդեցութեան շրջանները“, դէպի թիւրքաց Հայաստանը, որի կուլտուրական և քաղաքական ճակատագիրը Պետերբուրգը երբէք չի ուզում ձեռքից բաց թողնել — անգամ նոր սահմանադրական Թիւրքիայի օրով։ Ռուս կառավարութիւնը շարունակում է նայել Թիւրքահայաստանի վրայ, որպէս իր ապագայ նահանգների, և նա չի թոյլ տալիս ոչ թիւրքերին, ոչ էլ եւրոպական այս կամ այն պետութեան՝ երկաթուղային ձեռնարկներ սկսել այդ վայրերում *).. Գերմանիան յանձնառու էր լինում Պոտսդամի տեսակցութեան մէջ՝ չը շինել երկաթուղիներ Բաղդադեան գծի հիւսիսում։

Ահա այդ պատմական, նշանակալի իրաւախոհութիւնը։ Արդեօք բոլո՞րն է այդ... Արդեօք չը կա՞ն ուրիշ կէտեր ևս այդ խորհրդաւոր տեսակցութեան ծրագրի մէջ։ Շշուկներ կային — և կան տակաւին — որ երկու բանակցող թագակիրները տնօրինել են ոչ միայն Պարսկաստանի, այլ և Թիւրքիոյ բախտը։ Այդ շշուկները ահագին յուզմունք առաջացրին թիւրք կառավարական շրջաններում։ Պոտսդամի հանդիպումը ամենից աւելի սարսափեցրեց „Երիտասարդ Թիւրքիային“... Երկիւղն ու տարակուսանքները աւելի ևս սաստկացան, երբ ռուս կառավարութիւնը սկսեց ինչ որ զօրաշարժ, աւելի ճիշտ՝ զօրքերի տեղափոխութիւն Ղարսի շրջանում։ Դիմումներ՝ դիմումների վրայ — Պոլիս ու Պետերբուրգ։ Հանգստացուցիչ պատասխաններ՝ ռուսների կողմից։ Երկիւղը սակայն չը փարատուեց։ Թիւրք հեռատես վարիչները նշմարում են միշտ անդրկովկասեան սահմաններում աւանդական, երդուեալ ոսոխի ուրուականը, որ մի օր, վերջապէս, պիտի անէ թերևս վաղուց ծրագրած ոստումը և պիտի զաւթէ հայկական նահանգները...

Երիտասարդ Թիւրքիան, այո՛, ունի — չի կարող չունենալ — այդ մշտնջենական վտանգի գիտակցութիւնը և սակայն... ի տեղի նպաստաւորելու հայ տարրի զարգացումը — որով նա կարող էր սիրաշահել մի ամբողջ ժո-

*) Պոտսդամի տեսակցութիւնից ի վեր՝ Անգլիան և Ֆրանսիան տենդային եռանդով սկսել են բանակցութիւններ Պոլսում՝ թիւրք կառավարութիւնից երկաթուղային նոր կոնցեսիոններ շահելու և գէթ մասամբ գերմանական ծրագիրներին հակակշիռ լինելու դիտաւորութեամբ։ Եւ ահա վերջերս յամառութեամբ լուր է պտտում, թէ իբր Ֆրանսիան ստացել է իրաւունք՝ ձեռնարկելու երկաթուղիների շինութեան հայկական նահանգներում։ Մի չափազանց փափուկ կնճիռ, որ չի կարող չ'անդրադառնալ ռուս-ֆրանսիական յարաբերութիւնների վրայ։ Գերմանիային մերժելով, Ռուսաստանը պիտի յօժարէ՞ արդեօք, որ դաշնակից Ֆրանսիան „քաղաքակրթէ“ թիւրքաց Հայաստանը... Այդ կնճիռը շօշափեց իր մի խմբագրականի մէջ պարիզեան ծանրախոհ, պահպանողական Temps-ը և բացասական պատասխան տուեց...

„Ֆրանսիան չի կարող իրագործել մի այդպիսի ծրագիր, որ ուղղուած է դաշնակից պետութեան դէմ... քանի որ պիտի տայ ռազմական դիւրութիւններ Տաճկաստանին՝ ընդդէմ իր դրացուն“...

Ահա այդպէս, հիւսիսային բռնակալութիւնը, 30 տարի շարունակ Հայաստանը ստրկացնելուց ու արիւնոտելուց յետոյ՝ այսօր ևս ամեն ճիգ ի գործ դնում խափանելու միւս արևմտեան պետութիւնների ծրագիրները իր „ապագայ նւաճումների“ մէջ և մեր դժբախտ երկիրը, այդ յամառ ու յարատև զաւերի շնորհիւ, գուցէ դեռ երկար ժամանակ պիտի զուրկ մնայ քաղաքակրթութեան ամենատարրական բարիքներից։

ղովուրդ և թուլք կանգնեցնել մոսկովեան բռնապետութեան արշաւի առջև—նա ամեն կերպ, ընդհակառակը, տկարացնում է այդ ազգի յառաջխաղացութիւնը, տածում է դէպի նա՝ հին, համիդեան ոճրագործ թերահաւատութիւնը, անվերջօրէն քաշքշում է նրա ներքին բարենորոգումների հարցը, խաթարում է նրա ազգային-դպրոցական առաջադիմութիւնը — պանթիւրքիզմի ու հեգեմոնիայի տխուր նշանաբանով—դուրս է քշում դպրոցներից ռուսահայ գործիչներին, որ եկել են փոքր ինչ աւելի փութացնելու լուսաւորութեան ու վերաշինութեան գործը այդ խաւար ու փլատակ տարտարոսում... թունաւորում է, մի խօսքով, մեր ազգային տրամադրութիւնը և միշտ աւելի ու աւելի ներշնչում մեզ, որ Ռուսաստան և Թիւրքիա՝ մէկ հաշիւ է, որ օսմանեան սահմանադրութիւնը մեզ համար չէ, երկրի ընդհանուր բարգաւաճման համար էլ չէ, այլ մի խումբ անբուժելի կարճատեսների, որոնք բնաւ ընդունակ չեն դասեր առնել համաշխարհային պատմութիւնից և որոնք մղում են դէպի առաջ, դէպի անստոյգ ապագան, անսիստեմ, անփարոս, առանց լայն, կուլտուրական ծրագրի ու աշխարհահայեացքի, լոկ տարերային շարժումով, մէկ ձեռքում՝ բռնութեան խարազանող մըտրակը — որի „մեղմիչ ազդեցութիւնը“ տեսանք Եմենում ու Ալբանիայում — միւս ձեռքում՝ շօվինիզմի բորբոսնած աւետարանը, որ յաւիտենօրէն բաժանում է, պառակտում երկիրը „տիրոջի“ և „հպատակի“ չարագործ անջրպետներով, ի տեղի միացնելու և ձուլելու բոլորին՝ ի մի հզօր ու պատկառելի հայրենիք...

***

Պոտսդամի տեսակցութիւնից ի վեր՝ Գերմանիան վերջնականապէս և հաստատապէս դրեց իր թաթը Փոքր Ասիոյ վրայ։ Ցարի կառավարութեան այդ „բլըֆը“ տիեզերական անակնկալ էր։ Ոչ ոք չէր սպասում։ Ոչ ոք չէր համարում այդ քայլը նպաստաւոր — նոյնիսկ ռուսական շահերի տեսակէտից։ Ո՞վ կարող էր գուշակել մի այդպիսի „դիմադարձութիւն“ Բօսնիա-Հերցեգովինայի պատմական նուաստացումից յետոյ։ Գերմանիան էր, որ հասցրեց ցարիզմին այդ նուաստացուցիչ հարուածը, խրախուսելով Աւստրիային միացնելու Բօսնիա-Հերցեգովինան... Ոմանք տրամադիր են բացատրել այդ վրիպումը նոր մինիստր Սազօնովի „երիտասարդական անփորձութեամբ“... որի շնորհիւ իբր թէ նա ծուղակն է ընկել աւելի հեռատես և խորամանկ Վիլհելմ II-ի ու Բեթման-Հօլվեգի։ Հաւա՞ր կոչեց և ինքը խաբուած Ռուսաստանը, պետական Դումայի մէջ, յանձին Միլիւկովի։

Կադէտական պարագլուխը, ամբողջ օպպոզիսիօնի ծափահարութեան տակ արտասանեց իր փայլուն ճառերից մինը Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան մասին, — մի ճառ, որին, սակայն, չը հետևեց պատասխան... որովհետև բոլոր մինիստրները, մի տխմար ու շինծու արհամարհանքով, հեռացել էին Դումայից, նախ քան Միլիւկովի ամբիոն բարձրանալը...

„Արտաքին կացութիւնը այսօր միանգամայն սպառնական է—յայտարարում էր կադէտների առաջնորդը. սպառնական՝ շնորհիւ այն խորունկ փոփոխութիւնների, որ առաջացան Պոտսդամի տեսակցութիւնից“։ Եւ նա ակնարկում է ռուս կառավարութեան նենգ, դաւադիր ընթացքի վրայ, հասկացնում է, որ Գերմանիայի հետ այդպէս յանկարծակի եղբայրանալով. Բաղդադի երկաթուղային հարցի մէջ այդպիսի դիրք բռնելով. Ռուսաստանը դաւաճանում է իր դաշնակից Ֆրանսիային, ապա նաև Անգլիային, որի հետ մինչ այն՝ համերաշխ էր եղել „գերմանական արշաւի“ հանդէպ...

Այդ վերջին հանգամանքը սաստիկ յուզեց քաղաքական շրջանները ու պարլամենտները նաև Ֆրանսիայում ու Անգլիայում։ Ֆրանսիական պարլամենտի մէջ Ժօրէս խարանեց մինիստր Պիշօնին, որ իր մեղկ ու զիջող տրամադրութեամբ թոյլ էր տալիս „դաշնակցին“ այդպէս ցինիկօրէն ոտնահարել Ֆրանսիայի շահերը, անգամ լրջօրէն չը խորհրդակցիլ վերջինի հետ՝ նախ քան Պոտսդամ ուղևորուիլը։ Եւ այդ ծանր ամբաստանութեան մէջ՝ Ժօռէսի հետ համամիտ գտնուեցին անգամ Temps-ի պէս օրգանները։

Ահա, վերջապէս, հնչում է դժգոհութեան ու բողոքի ձայնը—գերմանական առաջխաղացութեան դէմ—նաև օսմանեան պարլամենտում։ Բասրի բէյ, լինելով հանդերձ գերիշխող իթթիհատական մեծամասնութեան անդամ, կատաղօրէն յարձակւում է Թիւրք դաշինքի գերմանամոլ ձգտումների դէմ։ Նա յորդորում է՝ մօտենալ Ֆրանսիային ու Անգլիային և ընդհանուր ուժերով դիմագրաւել սեւտօնեան յաւակնութիւններին Փոքր Ասիոյ մէջ։

„Գերմանական վտանգը“, այդպիսով, աճում է հետզհետէ, նա թափանցում է նաև Թիւրքական գիտակցութեան մէջ, և Բաղդադի ու այլ տնտեսական խոշոր ծրագիրներում կամաց-կամաց նշմարում են մի իրական պատուհաս, ուղղուած ոչ միայն բրիտանական աշխարհածաւալ զօրութեան դէմ, այլ և—ուղղակի կամ անուղղակի — ընդդէմ օսմանեան բարօրութեան ու ամբողջութեան։

Այդ վիթխարի ծրագիրները, անտարակոյս, յղի են ծանրակշիռ հետևանքներով — մանաւանդ Պոտսդամից ի վեր — և թերևս անտեղի չէր մի կարևոր Թիւրքի—Սալոնիկեան կենտրոնական կոմիտէի մի անդամի, բացականչութիւնը ռուս-գերմանական խորհրդաւոր բանակցութեան առթիւ.

„Միւրցստեգի համաձայնութիւնը զարկ տուեց մեր ուշադրութեան. Ռեվելի տեսակցութիւնը առաջնորդեց

մեզ՝ դէպի յուլիսեան Յեղափոխութիւն. ո՞ւր արդեօք պէտք է տանէ Պօսդամի համաձայնութիւնը։ Թւում է, թէ մեզ սպառնում է ազգային ծանր վտանգ"...

Ի՞նչ է գերմանական այդ խելայեղ արշաւանքի շարժառիթն ու նպատակը, ո՞ր տեղից է սկսւում նա, ո՞ւր է մղում և ի՞նչ տեսակ փոփոխութիւններ է յարուցանում միջազգային դիւանագիտութեան քարտէզի վրայ։ Ահա ցաւոտ խնդիրներ, որոնք ունին, անտարակոյս, ամենասերտ առնչութիւն հայկական ճակատագրի հետ և որոնց հարկ է պարբերաբար վերադառնալ „Դրօշակ"-ում։

ԹԻՒՐՔԻԱ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Ապստամբութիւն Եմենում, ապստամբութիւն ու ալրիւնհեղութիւններ Ալբանիայում, խոր, անհաշտ պառակտումներ „Մ. և Յ." Կոմիտէի ծոցում.. ճի՞շտ է արդեօք, որ այդ բոլորը արտաքին դաւերի ծնունդ է,— դաւեր, որոնց ահարկու ցանցը փռուած է ամբողջ օսմանեան կայսրութեան վրայ...

Այսպէս թէ այնպէս, կացութիւնը միշտ աւելի և աւելի բարդանում է, դժւարութիւնները հետզհետէ ամբարւում են և զէնքի շառաչը չի դադարում։

Անցեալ տարի Դրուզներ, Եմեն ու Ալբանիա, այս տարի նորէն Եմեն ու Ալբանիա — 1908 պատմական թւականից ի վեր օսմանեան հպատակ մահմեդականութիւնն է, որ խմորւում է, ըմբոստանում, շեշտելով իր անհաշտ առանձնաշնորհումները, յաւակնութիւնները։ Եմենը, հարկաւ, առաջին անգամը չէ, որ պարզում է ապստամբութեան դրօշը, բայց թւում է, թէ երբէք նա չի բարձրացել այնպիսի թափով, այսքան մոլեգին անհաշտութեամբ... Դեսպօտ-խալիֆի դիւային հմայքն ու հնարքները որոշ չափով սանձահարում ու զինաթափ էին անում արաբներին, իսկ այսօր, սահմանադրական ռէժիմի տակ նրանք այլ ևս անընկճելի են—և այնտեղ, աւազոտ անապատներում երկար, անհատնում մղելու է արիւնոտ պատերազմը... Մինչև որ Երիտասարդ Թիւրքիան յոգնած ու յուսահատ, ի վերջոյ հրաժարւէ դաշտից և ձգէ Եմենը իր ճակատագրին, կամ տայ նրան ինքնավարութիւն։

Դա կը լինի բանականութեան յաղթանակը։ Առ այժմ Թիւրք հայրենասէրների հեգեմոնիան շեշտւում է իր կենսունակ ու զսպիչ ախորժակներով և արիւնը հոսում է Եմենում, հոսում է նաև—Ալբանիայում։

Ուշագրաւ է ալբանական շարժումը։ „Յետադիմականն" ու „առաջադիմականը", ռէակսիօնն ու յեղափոխութիւնը այնպէս են հիւսուած նրա հոսանքում, որ դժւար է գնահատումն անել։ Անտարակոյս, մեծ, ահագին դեր են խաղում „հին, բարի ժամանակի", Աբդիւլ-Համիդեան շրջանի քաղցր յիշողութիւնները։ Զէ՞ որ այդ սարսափելի արնաուտները առանձնաշնորհեալ տարր էին այն երանելի ռէժիմի ներքոյ. նրանց վրայ էր յենւում Կարմիր Գազանը իր մշանջենական պանիկի տակ, իր դողացնող օրհասի մէջ. նրանց շէֆերը առատօրէն պարգևատրւում, հովանաւորւում էին պետութիւնից, նրանց բոլոր քմահաճոյքները կատարւում էին, նրանք չը գիտէին, թէ ինչ է տուրքը, հպատակութիւնը, նրանք միանգամայն ազատ էին և անկախ իրենց լեռներում... Իսկ այժմ սահմանադրական ռէժիմը գալիս է զսպելու նրանց, կրթելու նրանց վայրենաբարոյ բնազդները, ենթարկելու սահմանադրական դիսցիպլինին, կարգապահութեան, տուրք պահանջելու նրանցից, յանուն ընդհանուր, քաղաքացիական հաւասարութեան և պետութեան յարատևութեան։ Այժմ սահմանադրական ռէժիմը գալիս է նաև սանձելու նրանց ռազմական ախորժակները, սպանելու և կողոպտելու նրանց խորարմատ բնազդը, գալիս է, մի խօսքով, արծարծելու նրանց մէջ օրէնքի սէրն ու յարգանքը։

Այդ հակադրութիւնը ցնցում է ալբաններին և այդ մտքով նրանց շարժումը յայտնւում է մասամբ հակայեղափոխական, յետադիմական։

Բայց կայ մեդալի հակառակ երեսը։

Ալբանների առաջադրած պահանջների մէջ կան միանգամայն օրինաւորները։ Նրանք ուզում են իրենց ազգային դպրոցներն ունենալ, իրենց լեզուի գերիշխանութիւնը, նրանք պահանջում են ազգայնական ինքնօրինութիւն, ավտոնոմիա։

Իսկ տիրող ռէժիմը, Մ. և Յ. Կոմիտէի ներշնչմամբ, մղում է հակադիր քաղաքականութիւն, որի հիմնական նշանաբանն է—պանթիւրքիզմ, համաթիւրքութիւն։

Այդ նշանաբանի համաձայն՝ երկրի „միութեան" գաղափարը վերածւում է միակերպութեան գաղափարին։

Այդպէս են հասկացել բոլոր բռնաւոր կենտրոնական ռէժիմները և չարաչար վրիպել են։ Եւ ահա նոյն հողի վրայ սիստեմատիկ ֆիասկո է կրում „Երիտասարդ Թիւրքիան"։ Եմենն ու Ալբանիան շարունակական ալէկոծութեան մէջ են։ „Միակերպութեան" քաղաքականութիւնը վիժելու է նաև միւս, քրիստոնեայ ու մահմեդական ժողովուրդների մէջ։ Ամեն մի նոր ծրագիր բռնի „օսմանացման", ամեն մի փորձ ընդդէմ ազգերի ինքնուրոյնութեան՝ զարնելու է անխուսափելիօրէն անյաղթելի խոչընդոտների, լարելու է քաղաքական ու հասարակական մթնոլորտը և ծնելու է այնպիսի ահաւոր ճգնաժամեր, որպիսիք տեսնում ենք այսօր Նոր Թիւրքայում։ Հարիւրերրորդ անգամը հաճելի է մեզ ծանուցանել այն փրկարար, ռամկավարական սկզբունքը, որ „Դաշնակցութիւնը" առաջինն է ծանուցել 15 տարի սրանից առաջ Թիւրքական հորիզոններում և որ փնտրում է միութիւնը ոչ թէ միակերպութեան, այլ ներդաշնակ այլազանութեան մէջ, ուր իւրաքանչիւր ազգային մարմին կը պահպանէ իր բոլոր կուլտուրական առանձնայատկութիւնները, զարգանալով ու առաջադիմելով թև թևի՝ հարևան ազգերի հետ, կազմելով նրանց հետ մի անխախտ, ամբողջական պետութիւն։

Իւլիւսիսիոնը այդ ուղիով է, որ պիտի երթայ, եթէ կուզէ չէզոքացնել կենտրոնախոյս ազդակները։ Սակայն, Թիւրք մոլեռանդների տիրական ներշնչման տակ՝ այդ էւոլիւսիոնը շեղւում է կոպտօրէն իր բնաւոր ու փրկարար ճանապարհից և նետւում այնպիսի մացառների ու անդունդների մէջ, ուր „պետութեան

ամբողջութիւնն" իսկ մատնում է երբեմնապէս ամենածանր փորձութեան...

Ո՞ւր կը յանգի տիրապետող Կոմիտէի մէջ բորբոքուած հակամարտութիւնը — յայտնի չէ։ Բայց, անտարակոյս, նա յղի է ամենածանր հետևանքներով, որոնք այսօր խեղդուելով, վաղը կարող են վերստին երևալ և փոթորկել մթնոլորտը։ Եւս առաւել մտահոգիչ է այդ տագնապը՝ որ երիտասարդ-թիւրք նոր հերձուածը ցոյց է տալիս աշխարհին փոքր ինչ մութ, կասկածելի պատկեր, որ մատնում է գոյութիւնը հակայեղափոխական նոր դաւերի...

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ԹԻՒՐՔԻԱՆ

(Շարունակ. № 2-ի)

—

Զէյթերիոյ մէջ ռէֆէրէնդումը գոյութիւն ունի քառասուն տարիներէ ի վեր և այդ երկարատև ընթացքին մէջ, պարլամենտական տարեգրութիւնները չեն ցուցահաներ նման իրողութիւններ։ Ընդհակառակը, ժողովրդական բարձրագոյն հսկողութեան ռէժիմին ներքև՝ պատգամաւորները ամեն կերպ աշխատած են իրենց վրայ դրուած պարտականութիւնը իրագործել այնպէս, որ կրնան ճակատաբաց դուրս գալ ընդհանուր համաբաւութեան ժամին։ Անոնք ամեն կերպ, իրենց բուռն գործունէութեամբ, աշխատած են նախ՝ տեղիք չը տալ յաճախակի ռէֆէրէնդումներու և ապա՝ չը խոտորիլ հասարակութեան տրամադրութենէն ու կամքէն։

Համաժողովրդական քէարկութեան երկիրը ոչ թէ միայն այս կամ այն օրէնքը կը մերժէ կամ կը հաստատէ, այլ և կը տեսնէ, թէ իր պատգամաւորները ի՞նչպէս են արտայայտած իր կամքը։

Ասկէ զատ՝ քառասուն տարիներու երկարաձիգ փորձերը ցոյց են տուեր, որ ռէֆէրէնդումը բնաւ չի նաւզեցներ տիրող կուսակցութեան կամ կառավարութեան բարոյական ազդեցութիւնը։ Համաձայն չ'ըլլալով խորհրդարանական մեծամասնութեան որոշումներուն յետ մղելով պարլամենտին քէարկած օրէնքները — ժողովուրդը ատով հանդերձ անվստահութեան քէ չէ տուեր ո՛չ կառավարութեան և ո՛չ տիրող կուսակցութեան։

Ամենքն ալ կրնան սխալիլ և հեռանալ ժողովրդական կամքէն։ Իսկական ռամկավարութիւնը չէ պահանջեր մահկանացուներու անսխալականութիւնը, որ հնարաւոր չէ։ Ան կը պահանջէ միայն, որ գործուած սխալները և օրէնդրական մարմիններու վրիպումները սրբագրուին իր իսկ ժողովրդին գերագոյն բնութեամբ։ Ռէֆէրէնդումէ զուրկ երկիրները, ընդհանուր ընտրութիւններու ատեն, ամեն ջանք կը թափէին պարլամենտին կազմը փոխել, տապալել, որպէս զի հնարաւոր ըլլայ ուրիշ օրէնք կամ ուրիշ սկզբունք քէարկել։ Այդպիսի երկիրներու մէջ պարլամենտական կարգերու հիմնական փոխոխութեամբ միայն կրնան անցնիլ մինչ այդ մերժուած օրինագծերը։

Անոնք ուրիշ ճանապարհ չունին։

Մինչդեռ Զէյթերիան — առանց պարլամենտական կազմը փոփոխութեան ենթարկելու կրնայ ամեն տեսակ օրէնքներ քէարկել, եթէ անոնք կը բղխին ժողովրդական կամքէն և տրամադրութենէն։

Կառավարութեան, վարիչ կուսակցութեան և պատգամաւորներու փոփոխութիւնը, ուրեմն, անհրաժեշտ չ'ըլլալով՝ անոնք կրնան պաշտօնավարել երկար ատեն։ Եւ իսկապէս։ Ոչ մէկ երկիր այնքան կայուն, հաստատուն կառավարութիւն չունի և այնքան մշտական պարլամենտական կազմ։ Այսպիսի պայմաններու մէջ կը ստեղծուին հմուտ, փորձառու անձնաւորութիւններ և — ազատուելով պատահական ու ժամանակաւոր ղեկավարներէ — պետական կեանքը կը յանձնուի մասնագէտ գործիչներու իմաստութեան։

Հրապարակագիրներէն ու ընկերաբաններէն ոմանք ընդհանրապէս համաձայն ըլլալով հանդերձ ռէֆէրէնդումի գաղափարին՝ կը կարծեն թէ շատ երկիրներու համար կրնայ չարիքներ ծնիլ անոր գործադրութիւնը։

Եթէ ընդհանուր ձայնտուութիւնը ընտրողական օրէնքներու հիմք կընդունինք, եթէ համոզուած ենք, որ տեսալ երկրի մը մէջ ամենուն մասնակցութիւնը միայն կրնայ յառաջադէմ, ռամկավար պարլամենտ ստեղծել — ապա ոչ մէկ պատճառ կայ մերժելու ռէֆէրէնդումի հաստատութիւնը։ Հաստատութիւն մը, որ կը խոտցնէ ընդհանուր ձայնտուութեան առաւելութիւնները և կամփոփէ անոր օգտակար կողմերը։

Ընդհանուր ձայնտուութեան հետ անխզելի կերպով կապուած է ռէֆէրէնդումի սկզբունքը։

Եթէ պետութեան վարիչները ընդհանուր ձայնտուութեան մէջ կը տեսնեն անհրաժեշտ, բանական ու առողջ հիմունք մը, եթէ այն կ'ընդունին անկեղծօրէն և ոչ իբր խրտիլակ, եթէ չեն կամենար թագուն ճանապարհներով անզօր ու անիրական դարձնել ռամկավարութեան այդ մեծ սկզբունքը — այն ժամանակ բնաւ ըմբռնելի չէ ռէֆէրէնդումի մերժումը։ Որովհետև ընդհանուր ձայնտուութիւնը իմաստ ունի միայն այն ժամանակ, երբ պարլամենտին որոշումները ենթակայ են ժողովրդի հսկողութեան և ոչ ժողովրդէն դուրս ու ժողովրդին հակառակ մարմիններու քմահաճ ու կամայական ցանկութիւններուն...

Ռէֆէրէնդումի հետ միասին Զէյթերիոյ մէջ գոյութիւն ունի և ժողովրդական նախաձեռնութիւն (*initiative populaire*) կոչուած հաստատութիւնը։

Մինչդեռ ռէֆէրէնդումի միջոցով ժողովուրդը կը հաստատէ կամ կը մերժէ պարլամենտին քէարկած օրէնքները՝ ժողովրդական նախաձեռնութեան իրաւունքով ան կ'առաջարկէ իր յղացած օրինագծերը և կը յանձնէ երկրի ընդհանուր քէարկութեան։ Առաջին պարագային՝ օրէնքի նախաձեռնութիւնը կուգայ ներկայացուցչական մարմնէն. երկրորդ պարագային՝ ընտրողներու, քաղաքացիներու բանակէն...

Օրէնդրական այս երկու նշանակելի հիմնարկութիւններով կը սրբագրէ ներկայացուցչական սիստեմին թերութիւնները, կը հանդիսանայ ոչ միայն ընտրող, այլ և օրէնդիր։ Այսպիսով՝ ուղղակի օրէնդրութեան համբաւոր տեսութիւնը, որու կիրառման անհնարաւորութեան մասին խօսած ենք արդէն և որ իբր կը գործադրուէր հին աշխարհի մանր հասարակութիւններու մէջ — մասամբ կ'իրագործուի այժմ զէյթերական հողին վրայ...

—

Յառաջադէմ և լուսաւոր պետութիւններու կեանքէն

անցնելով Թիւրքիա՝ մենք կը գտնուինք դժուարին կացութեան մը հանդէպ։ Ի՞նչպէս կրնայ Նոր Թիւրքիան օգտուիլ օրէնսդրական այն ռամկավար ձևերէն, որոնք կը հրահանգուին քաղաքական, հասարակական գիտութիւններէն և որոնք մասամբ կը կիրառուին ուրիշ երկիրներու մէջ։

Արդեօք դեռ երկա՞ր ժամանակ պիտի բաւականանայ Թիւրքիան փոքրիկ, համեստ վերանորոգումներով։ Արդեօք Թիւրքական ամբողջ պատմութիւնը, բովանդակ իրականութիւնը անկարելի՞ կը դարձնեն անոր արագ, շուտափոյթ կերպարանափոխութիւնը։

Վերջին երկու տարուան ընթացքին մէջ Թիւրքիան՝ օրէնսդրական ռամկավարութեան տեսակէտով՝ մէկէ աւելի հրահանգիչ օրինակներ հանդէս բերաւ։ Խորհրդարանը հոն — որքան ալ չափաւոր ու երերուն տարրերէ բաղկացած — այնուամենայնիւ կրցաւ ցոյց տալ իր օրէնսդրական անկախութիւնն ու բարձրութիւնը։ Պարլամենտին որոշումները Թագաւորին հաստատութեան առաջարկեցան այո՛, սակայն, ուղղակի թէ անուղղակի, քանի մը անգամ կրկնուեցաւ, որ Թագաւորը չի կրնար մերժել կամ չհաստատել այդ որոշումները։ Ինքը միապետը այս կամ այն առիթով յայտարարեց թէ՝ որպէս սահմանադրական երկրի պետ՝ չի կրնար պարլամենտին կամքէն հեռանալ։ Այս նախադրները լաւագոյն սկզբունքի, ռամկավար օրէնսդրութեան մը հիմքերը կրնան դառնալ։

Նոր Թիւրքիոյ յառաջադէմ գործիչներու և անկեղծ ժողովրդասէրներու վրայ բարոյական պարտք կը ծանրանայ օգտուիլ այդ սովորութիւններէն ու աւանդութիւններէն՝ զօրացնելու համար օրէնսդրական իշխանութեան — պարլամենտին — անկախութիւնը։

Թագաւորէն զատ՝ խորհրդարանի որոշումները պէտք ունին նաև Ծերակոյտին վաւերացմանը։ Այս մարմինը ընտրեալ ժողով չէ, ժողովրդական ներկայացուցչութիւն չէ։ Անոր անդամները իրական, շօշափելի պատասխանատուութենէ ազատ են։ Եթէ նախարարները պարտաւոր են համար տալ խորհրդարանին, իսկ վերջինս իր ընտրողներուն, ժողովրդին — Ծերակոյտը իրապէս ենթակայ չէ ոևէ լուրջ պատասխանատուութեան։ Ադով հանդերձ՝ երկրին օրէնսդրական կեանքին մէջ անոր մասնակցութիւնը նշանակալից է։ Տարօրինակ պատահականութեամբ՝ օսմանեան օրէնսդրական պատմութեան մէջ՝ Ծերակոյտին միջամտութիւնը կատարեր է աւելի յառաջադիմական ուղղութեամբ։ Պարլամենտին պահպանողական որոշումները մէկ-երկու անգամ Ծերակոյտի քննութեան բովէն անցնելով՝ սրբագրուեր, ազատական կերպարանք են ստացեր։

Այդ ինքնատիպ երևոյթը անշուշտ հիմք չպիտի տայ նոր Թիւրքիոյ ռամկավարականներուն՝ Ծերակոյտին հետ ազատական-ժողովրդական տրամադրութիւններ նոյնացնելու։ Այսօր վերին պալատին քէէարկութիւնը տարամերժ դիպուածով միայն յառաջադիմական է։ Վաղը անիկա կրնայ մերժել, արգիլել ժողովրդական կամքին արտայայտութիւնը և պայքարիլ անոր դէմ։

Նոր Թիւրքիան իր քաղաքական վերածնութեան ճանապարհին՝ պէտք է ամեն կերպ աշխատէ խորհրդարանը ազգին ընդհանրութեան ժամադրավայր դարձնել, անոր օրէնսդրական իրաւունքները վերջնականապէս ձևաւորել, ամրապնդել, Ծերակոյտին ու Թագաւորին արգելքները չէզոքացնել, վերացնել։ Անկասկած այս ամենը դժուար է կարճ ժամանակի մէջ իրագործել։ Թիւրքիոյ հին ըէժիմը խորունկ հիմքեր է թողեր ժողովրդին բովանդակ աշխարհահայեցքին ու հոգեբանութեան մէջ։ Երկրին տնտեսական-կրթական-հասարակական կեանքը նպաստաւոր պայմաններ չեն ներկայացներ։ Քաղաքական-օրէնսդրական վերածնութիւնը և ռամկավարացումը անխուսափելիօրէն կը կրեն ընդհանուր միջավայրին ազդեցութիւնը։ Այնուամենայնիւ, նոր Թիւրքիոյ յառաջադէմ ու արմատական կուսակցութիւնները — մինչև անգամ երկրին ընդհանուր յեղափոխութեան մէջ — կրնան ահագին գործ կատարել։ Անհրաժեշտ է միայն, որ անոնք ամենը գիտակցական ու հաստատուն աշխարհահայեցք մշակեն։ Մէկ ընդհանուր սկզբունք — ռամկավարութեան հրահանգներու վրայ հիմնուած։

Պէտք է միշտ հսկել, որ երկրին առարկայական, բնական արգելքները չբազմապատկուին ենթակայական, արհեստական խոչընդոտներով։ Հասարակական կեանքին մէջ այս վերջին տեսակի գործօնները յաճախ ճակատագրական կը դառնան։ Եւրոպական կարգ մը երկիրներու մէջ անոնց ներկայութեան ու ներգործութեան պատճառով մինչև օրս յետաձգուած է ռամկավարական օրէնսդրութեան վերջնական յաղթանակը։ Նոր Թիւրքիան ուշադիր ու լաւած գործունէութեամբ՝ կրնայ անոնց նշանակութիւնը և ազդեցութիւնը նսեմացնել։ Այդ պատմական աշխատանքէն յետոյ՝ հնարաւոր կ'ըլլայ՝ համեմատաբար աւելի կարճ ժամանակի մէջ, աւելի քիչ ճիգով և նուազ քաղաքակիրթ հողի վրայ իրականացնել թերևս այն, ինչ որ ուրիշ տեղ հնարաւոր չէ եղած։

Եթէ կեանքին ընդհանուր յառաջադիմութիւնը — տնտեսական, մտաւոր, հասարակական — պատճառ կը դառնան աւելի կատարեալ քաղաքական-օրէնսդրական դրութեան, միւս կողմէ՝ ռամկավար օրէնսդրութիւնն ու պարլամենտը մեծ զարկ կուտան երկրին ընդհանուր զարգացման և բարգաւաճման։

Այսպիսի պայմաններու մէջ ո՛չ իսկական պարլամենտարիզմը և ո՛չ ժողովրդական անմիջական օրէնսդրութիւնը — ռէֆէրէնդում ու նախաձեռնութիւն — քաղաքական երազներ չեն երևար...

VII

ԳՈՐԾԱԴԻՐ ԵՒ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԹԱԳԱՒՈՐ.— ՆԱԽԱԳԱՀ։

Քաղաքական բնաշրջման ամենէն յատկանշանական գծերէն է նաև օրէնսդիր, գործադիր և դատական իշխանութիւններու անջատումը. այն, ինչ որ քաղաքական-ընկերական գիտութիւններու մէջ կանուանի „իշխանութեանց բաժանման սկզբունք“ — *principe de séparation des pouvoirs*։ Հին հասարակութիւններու մէջ այս սկզբունքը գիտակցօրէն և սիստեմատիկ կերպով երբէք չէ գործադրուեր. բայց եղած է անոր սաղմը։ Հռոմի Ծերակոյտը յաճախ՝ գործադիր մարմնի իրաւասութիւնները ունէր օրէնսդիր մարմնի հանդէպ։

Միջին դարերու թէ կենտրոնական պետութեան և

թէ կիսանկախ աւատական տիրապետութիւններու վարչակարգին տակ այսօրուան երեք իշխանութիւնները միացած էին մէկ մարմնի, յաճախ մէկ անձի մէջ։ Թագաւորը, իշխանը, աւատատէրը օրէնքներ կը դնէր ժողովրդի ուսին. այդ օրէնքներու գործադրութեան կը հետամտէր և կը գտնէր այն անձերը, որոնք կը մեղանչէին յայտարարուած օրէնքներու դէմ։

Նոր պատմութեան մէջ, միապետական իշխանութեան ուժեղանալով և կենարօնանալով՝ այս դրութիւնը առաւել ևս ամրացաւ ու սրբագործուեցաւ։

Սակայն, ժողովրդապետական գաղափարներու յղացումով և զարգացումով՝ քաղաքական-պետական կեանքին կը հաղորդուի — սահմանադրական իրաւակարգին հետ միաժամանակ — նաև իշխանութիւններու բաժանման սկզբունքը։

Անգլիան, որ առաջինն էր նոր ժամանակներու քաղաքական վերակազմութեան և յեղաշրջման դժուարին գործին մէջ՝ առաջինն եղաւ և՝ այս սկզբունքին յայտարարութեան ու պաշտպանման մէջ...

Իշխանութիւններու բաժանման սկզբունքը արդարութեան գործ կը նկատուի։ Նշանաւոր իրաւագէտ-պատմաբաններէն շատերը — սկսեալ Ֆրանսացի Հանճարեղ Մոնտէսքիօէն (*Montesquieu*)—այն կարծիքն ունին՝ թէ անկարելի է միաժամանակ և՝ օրէնսդիր ըլլալ և՝ գործադիր և՝ դատաւոր... և ատոր հետ մէկտեղ արդարութեան, անկողմնապահութեան, անաչառութեան սկզբունքին ծառայել։

Միապետական, հակաժողովրդական իրաւակարգի և հասարակակարգի մէջ այդ տեսակէտը շատ բանաւոր է և ըմբռնելի։ Սակայն սահմանադրական և էապէս ռամկավար կարգերու ներքև՝ իշխանութիւններու բաժանման համբաւաւոր սկզբունքը կը ծագի ո՛չ թէ անոնց ներքին, անդիմադրելի ու անխուսափելի հակասութենէն, այլ աշխատանքի բաժանման մեծ սկզբունքէն։ Առաջին սկզբունքը երկրորդին ստորաբաժանումն է ու մասնիկը։ Եւ յիրաւի. նորագոյն ժամանակներու մէջ — ապագայ հասարակակարգին և իրաւակարգին ներքև ևս առաւել— գործադիր և դատական իշխանութիւնները էապէս տարբեր ու համազօր իշխանութիւններ չեն օրէնսդիր իշխանութեան նկատմամբ, այլ միայն անոր ճիւղերը և ենթադրեալները... Իսկական և գերագոյն իշխանութիւնը մէկ է, անբաժանելի ու անխախտ։ Գործադիր և դատական իշխանութիւնները—աշխատանքի բաժանման սկզբունքէն յառաջացած—պիտի կատարեն, գործադրեն այն հրահանգները, այն օրէնքները, որ կ'ելլան օրէնսդիր իշխանութենէն...

—

Գործադիր իշխանութիւնը ներկայ պետական համակարգի մէջ ահագին դեր կը ստանձնէ և շատ յաճախ կը գերազանցէ օրէնսդիր իշխանութիւնը՝ մինչև անգամ սահմանադրական վարչաձևին ներքև։ Օրէնսդիր իշխանութեան բոլոր էական, անհրաժեշտ, անյետաձգելի հրահանգները ան կրնայ դանդաղցնել, աղաւաղել, կազմալուծել, մէկ քանի աննշան կէտ միայն իրագործել և կարևորը անկատար թողուլ։

Գործադիր իշխանութեան խնդիրը, այդ ցաւոտ պրօբլեմը, ժամանակակից պետութիւններու ամենամեծ մտահոգութիւններէն է։

Ի՞նչպէս իրագործել գործադիր մարմին—նախարարութեան — ընտրութիւնը... Անգլիական պատմութեան մէջ այս հարցը բազմաթիւ անգամներ և շատ երկար տևողութեան միջոցին յուզած և փոթորկած է պարլամենտը։ Վերջինիս և թագաւորին ընդհարումները, իսկական պատերազմները, նախարարական տագնապին արդիւնքն են եղած։ Պարլամենտը օրէնսդրութեան ղեկը իր ձեռքն առնելով կը ձգտէր տիրապետել նաև անոր գործադրութեան։ Թագաւորական իշխանութիւնը զիջելով մէկը, չէր կամենայ լքել նաև միւսը։ Հակառակ ժողովրդական պարլամենտի նշանաբանին՝ թէ թագաւորը կը թագաւորէ, բայց չի կառավարեր — ասիկա կուզեր և՝ թագաւորել և՝ կառավարել։ Թագաւորը կուզեր, որ նախարարութիւնը իր նախարարութիւնը ըլլայ, պարլամենտը կուզեր, որ անիկա խորհրդարանի գործադիր վարչութիւնը դառնայ։ Թագաւորը կուզեր, որ նախարարութիւնը իր առջև միայն պատասխանատու ըլլայ, պարլամենտը կը ցանկար, որ այդ պատասխանատուութիւնը ժողովրդական ներկայացուցչութեան ենթարկի։ Այս ճակատամարտը երկուստեք երկար ժամանակ շարունակուեցաւ, մինչև որ—փոփոխակի յաջողութիւններէ ու տատանումներէ յետոյ—պարլամենտը կրցաւ ձեռք բերել իրական իրաւունք նախարարական կազմին վրայ։ Գործադիր իշխանութիւնը, կառավարութիւնը այնուհետև պիտի սկզբնաւորուէր պարլամենտի ներսը, անոր մեծամասնութեան մէջէն։

Անգլիական աշխարհի այս նորագոյն ձևը, սահմանադրական կարգերու, պարլամենտի գաղափարին հետ՝ անցաւ եւրոպական միւս երկիրներու պետական կեանքին։

Քաղաքական բնաշրջման այս հիմնական սկզբունքը, պարլամենտական կարգերու այս երկրորդ, կարևոր քայլը տակաւին չէ իրագործուած Գերմանիոյ, Աւստրիոյ և մանաւանդ Ռուսաստանի մէջ։ Պարլամենտարիզմը այդ աւատական, պահպանողական պետութիւնների սեփականութիւնը չէ դեռ ևս։ Թէ Ռայխստագի և թէ Դումայի յառաջադէմ կուսակցութիւնները մինչև օրս անկարող են եղած տիրող կարգերու վրայ ոևէ ազդեցութիւն ունենալ, ու երկու երկիրներու մէջ ալ նախարարութիւնները նկատուել են կայսրներու հաւատարիմ և ուշադիր ծառաներ՝ կոչուած միայն անոնց կամքով և պատասխանատու միայն անոնց առջև։ Թիւրքիոյ սահմանադրական աւանդութիւնները սկզբէն և եթ—այդ հարցի մէջ—լաւագոյն շաւիղով առաջ ընթացան։ Թագաւորը, սուլթանը չէ նախարարութեան տէրը և անոր գործերու գերագոյն ստուգողն ու հաշուապահը։

Նախարարութիւնը այդ նորակազմ պետութեան մէջ պարլամենտի —անոր մեծամասնութեան—նախարարութիւնն է և պատասխանատու է միայն անոր առջև։ Ուամեն անգամ, երբ խորհրդարանը ոևէ խնդրի շուրջ հարցապնդման հրաւիրէ նախարարութիւնը և չգոհանալով անոր ցուցուցած գործունէութենէն՝ մերժէ վստահութեան քուէն՝ նախարարութիւնը հարկադրուած պիտի հեռանայ իր պաշտօնէն։ Որովհետև, պատասխանատուութեան սկզբունքին համաձայն՝ ոչ մէկ նախարար կրնայ կառավարութեան մէջ մնալ առանց խորհրդարանին հաճութեան..

Որքան ալ ռամկավարութեան յաղթանակին հետզհետէ ծաւալումով՝ գործադիր իշխանութիւնները անմիջականօրէն կապուին խորհրդարաններու հսկողութեան և անոնց անձեռնմխելի իրաւասութեան՝ այնուամենայնիւ այսօրուան նախարարութիւնները շատ են հեռու օրէնսդրական իշխանութենէն։ Ծրագիրներու և անոնց իրագործման յաւիտենական անզուգադիպութիւնն է այդ, այո՛, տեսականի և գործնականի մշտական, անխուսափելի աններդաշնակութիւնը։ Եւ գուցէ ո՛չ մէկ ժամանակ, անգամ գիտութիւններու և կեանքի խորունկ զարգացման միջոցին, հնարաւոր չպիտի ըլլայ այդ երկու էութիւններու — օրէնքներու և անոնց կիրառութեան միջև — կատարեալ, բացարձակ համերաշխութիւն ստեղծել։ Սակայն օրէնսդիր և գործադիր իշխանութիւններու այսօրուան անհամաձայնութիւնը արդիւնք է ոչ միայն բնական, ինքնաբուխ և ինքնակայ անհրաժեշտութեան, այլ և հետևանք է մէկէ աւելի արհեստական հինաւուրց գործոններու, որոնք կը յամառին պարլամենտական մեքենային մէջ, կը թագնուին անոր այս կամ այն ծալքին տակ, կը թառին անոր այս կամ այն բարձրութեան վրայ և ամեն կերպ կը ձգտին պահպանել պետական կեանքի նախկին ձևը, միապետութեան սկզբունքը, վաղեմի դասակարգերու տիրապետութիւնը ընդդէմ ժողովրդական իրաւունքներու և սահմանադրական վարչաձևի։

Այս երևոյթը ծածուկ ու քողարկուած չէ մնացեր իսկական ռամկավարութեան աչքերէն։ Խնդիր է ծագեր հիմնական վերամշակութեան ենթարկել գործադիր իշխանութեան ամբողջ կազմը։ Հարց է բարձրացեր մինչև իսկ խլել անոր ընտրութիւնը պարլամենտէն և յանձնել անմիջապէս ժողովրդին։ „Ամեն գերիշխանութիւն կը ծագէ ժողովրդէն“. (*toute souveraineté dérive du Peuple*). — այս է ռամկավարութեան մեծագոյն սկզբունքը։ Ուրեմն, թող գործադիր իշխանութիւնն ալ սկզբնաւորի ժողովրդական կամքէն ուղղակի կերպով, առանց այս կամ այն տարրին միջամտութեան։ Թող ժողովուրդը, ընտրողներու, քաղաքացիներու ամբողջութիւնը հրապարակ գայ և ընտրէ իր նախարարութիւնը։ Թող այլ ևս գոյութիւն չունենայ ո՛չ թագաւորի, ո՛չ պարլամենտի նախարարութիւն, այլ միմիայն ժողովրդի նախարարութիւն։

Իսկական ռամկավարական տեսակէտով արդարև, այս ուղղակի ընտրութիւնը լաւագոյնը կըլլար։ Փոքրիկ համայնքներու, մանր միութիւններու մէջ շատ յաճախ կը գործադրուի նման սկզբունք։ Սակայն ժամանակակից բարդ ու բազմակողմանի կեանքին մէջ, այսօրուան հասարակութեան արագ, շուտափոյթ ընթացքին մէջ, ուղղակի օրէնսդրութեան նման՝ նախարարական ուղղակի ընտրութիւնն ալ անհնարին, անգործադրելի կը թուայ։

Գործադիր մարմինը ամեն օր կրնայ հարցապնդման հրաւիրուիլ Ո՞վ պիտի ձևակերպէ հարցապնդումը, ո՞վ պիտի դատէ կառավարութեան գործերը. որո՞ւ առաջ պիտի պատասխանատու ըլլայ նախարարական կազմը։ Արդեօք ուղղակի ընտրութիւնը իրապէս աւելի անպատասխանատու չի՞ դարձներ նախարարութիւնը։ Ժողովուրդը, քաղաքացիներու հոծ բազմութիւնը ի վիճակի չէ ամեն անգամ պատասխանատուութեան կանչել նախարարները, հարցապնդել, դատել, հեռացնել, նորերն ընտրել... Այսպիսով, նախարարութեան գործերին իրական վերահսկիչն ու քննադատը պարլամենտն է, ժողովրդական ներկայացուցչական մարմինը։ Քաղաքացիները կրնան ամեն կերպ — հարկաւ պարագային — թէ ժողովներով, թէ բողոքներով, թէ հրապարակային ցոյցերով, թէ պարբերական ու թռուցիկ հրատարակութիւններով ազդել նախարարութեան վրայ և պահանջել այս կամ այն օրէնքին անմիջական իրագործումը։ Բայց մշտապէս, իբրև օրէնք և իբրև սիստէմ, անոնք չեն կրնար այդ պաշտօնը կատարել։ Ժամանակակից մեծ պետութիւններու մէջ, կեանքի տենդոտ վազքին մէջ այդ սկզբունքը անգործադրելի է։ Նախարարութիւնը կարելի է մերձեցնել օրէնսդրական իշխանութեան և անոնց անջրպետը բաւականաչափ լեցնել՝ հեռու վանելով թագաւորի կամ նախագահի իրաւունքները և ամեն իրաւասութիւն յատկացնելով միայն պարլամենտին։ Որքան ալ առաջադէմ, պարլամենտական երկիրներու մէջ առանց խորհրդարանի „համաձայնութեան“ գործադիր իշխանութեան կազմումը անթոյլատրելի ըլլայ, որքան ալ թագաւորն ու նախագահը նախարարապետ հրաւիրելու և անոր հնահանգներ տալու տեն ինկատ ունենան պարլամենտին տրամադրութիւնը — այնուամենայնիւ միմիայն այդ իրաւունքը հրաւիրելու, նոր նախարարութիւն կազմելու պաշտօնը անհանդուրժելի է իսկական ռամկավարական վարչակարգին ներքև։

Այսօր պարլամենտը կըսպասէ մինչև այս կամ այն նախարարը անիրաւութիւն գործէ, սխալ քայլեր ընէ, որպէս զի զանի հարցապնդման հրաւիրէ, անվստահութեան քուէ տայ և նոր միայն պաշտօնէ հեռացնէ։ Բայց պարլամենտը ո՛չ թէ միայն այս վերջին իրաւունքները պիտի ունենայ, այլ և ինքը պիտի ընտրէ իր նախարարութիւնը ամբողջովին, սկիզբէն ի վեր, և ինքը պիտի հաստատէ։

Թագաւորը կամ մինչև իսկ նախագահը չպիտի կրնան աւելի բարձր իշխանութիւն ունենալ, քան պարլամենտը։ Անհրաժեշտ է, ուրեմն, նախ և առաջ հեռացնել, ոչընչացնել այն բոլոր պահպանողական տարրերը, միապետական ռէժիմին այն բոլոր վերապրումները (*survivance*), որոնք այս կամ այն անունով, այս կամ պատրուակով բուն են դրած պարլամենտական ցանցին մէջ։ Երբ այս աշխատանքը կատարուի, գործադիր իշխանութիւնը մէկ նշանակելի քայլ ևս կը մերձենայ օրէնսդրականին։

Միւս կողմէ՝ խորհրդարանին ներքին կազմի բնաշրջելով ու զարգանալով՝ արմատական և իսկապէս ռամկավարական պարլամենտին ազդեցութեամբ ու յարատև ներգործութեամբ՝ նախարարութեան ուղղութիւնը դէպի յառաջադիմութիւն, դէպի ժողովրդապետութիւն կը փոխուի։ Երբ որ պարլամենտները — մեր արդէն իսկ ընդգծած սկզբունքներով ու ոգով կատարելագործուին՝ և այսօրուան թոյլ, տարտամ, քաղաքական կերպարանքէն բարձրացած՝ ժողովրդեան հարազատ, անյողդողդ, ուժգին արտայայտութիւնը դառնան — այն ժամանակ գործադիր իշխանութիւնը ևս չի մնայ, չի կրնար մնալ ներկայիս ողբալի կացութեան մէջ։

Նախարարութեան բնաշրջումը սերտ կերպով կապ-

ւած է պարլամենտին, օրէնսդրական մարմին բնաշրջման հետ...

—

Դատական իշխանութիւնը հասարակական-պետական կեանքին մէջ առաջնակարգ կարևորութիւն կը ներկայացնէ։ Մարդկային ստեղծագործութեան ամենանուրբ և միանգամայն ամենածանրակշիռ խնդիրներէն է ան։ Դատաստանը և արդարադատութեան ամբողջ գործը դարեր շարունակ քաղաքականութեան, կառավարութեան ձեռքին գործիք են եղած։ Միապետական վարչաձևերու ներքև արդարութիւնը երբէք չէ գրաւած իր արժանաւոր տեղը։ Բռնակալները պատմութեան երկարատև, խաւար, արիւնոտ ընթացքին քանիցս արհամարհած են նոյնիսկ իրենց օրէնքները՝ պատժելու համար ազնիւ հոգիներ։ Քաղաքական կեանքին այս արտայայտութիւնը ևս—դատական իշխանութիւնը — միւս արտայայտութիւններու նման և անոնց հետ համերաշխ ազատագրուեցաւ հին ռէժիմէն և մտաւ նոր, քաղաքակիրթ պայմաններու մէջ։

Բրիտանական մեծանուն կղզին այստեղ ալ նոր աշխարհին առաքինութեան և քաղաքական ազնուութեան դասեր տուաւ։ Տակաւին այն արիւնէ մշուշին մէջ, որ կը տարածուէր միջնադարեան հասարակութիւններու վրայ՝ ան հռչակեց անձի անձեռնմխելիութեան նուիրական սկզբունքը։ Հաստատուեցաւ հմբաւաւոր *Habeas corpus*-ը, որու համաձայն ո՛չ մէկ քաղաքացի կրնար բանտարկուիլ և քսանչորս ժամէ աւելի բանտին մէջ մնալ, առանց հիմնաւոր և արդարացուցիչ փաստերու։ Անգլիական պատմութեան ամենէն խոշոր, ամենէն փայլուն և ամենէն մարդկային նուաճումներէն է ասիկա։ Դատաստանական գործը՝ ենթարկելով անկասկած երկրին օրէնսդրական իշխանութեան՝ կազատուէր սակայն այն աւերիչ և դժոխային տարրէն, որ աղարտած է անցեալին մէջ բարոյական ամեն ըմբռնում և որ՝ տակաւին մեր օրերուն, Հին-Թիւրքիոյ և ընդարձակածաւալ Ռուսաստանի հարթութիւններուն վրայ, սպանած է անգամ իր սեփական օրէնքը, իր արդարութիւնը և առհասարակ ամեն արդարութիւն... Գործադիր իշխանութիւնը միշտ պայքարելով օրէնսդիր մարմնին դէմ, ձգտելով պահպանել կեանքին մէջ միապետական կարգերը՝ աշխատած է իր անմիջական ազդեցութեան տակ առնել արդարադատութեան գործը։ Եւ վերջինս, փոխանակ օրէնսդրական տրամադրութիւններուն և օրէնքներու ոգիին համապատասխանելու՝ շատ յաճախ ենթարկուած է կառավարութեան եսական, քիրտ նկատումներուն։

Ռամկավարութիւնը դիտած է այդ անպատիւ երևոյթը և ամեն կերպ ձգնած է, որ դատական իշխանութիւնը ազատագրուէ կառավարութեան որոգայթէն. մօտենայ օրէնքներու և արդարութեան անկախ ու անբռնազբօս իրագործումին։ Անկասկած, դատական իշխանութիւնը կատարեալ անկախ կամ հակամարտ մարմին չէ օրէնսդրական իշխանութեան նկատմամբ։ Անկասկած ան իր տրամադրութիւնները կ'առնէ ժողովրդական ներկայացուցչական գերագոյն ատեանէն—պարլամենտէն—որ պետութեան մէջ բարձրագոյն հաստատութիւնն է՝ օրէնքներ մշակող և իրաւունքներ սահմանագծող։

Ու այսպէս՝ արդարօրէն ու անաչառօրէն դատելով օրէնսդրական մարմնին, բայց ոչ կառավարութեան նկատած յանցաւորները—դատական իշխանութիւնը ենթակայ չէ, չպիտի ըլլայ ոչ մէկ կողմնակի ազդեցութիւններու։ Օրէնքներու խղճմիտ կիրառումէն կառավարութի՞ւնը կը տուժէ թէ անհատը, դատի ժամանակ պետութեան քաղաքականութի՞ւնը կը խորտակի թէ ոևէ ոճրագործ — արդարադատութեան համար այդ բացարձակապէս միևնոյնն է։ Անոր անկախութիւնը հոս կը կայանայ։

Ժամանակակից պետութիւնները ընդհանրապէս հիմնական բարեփոխումներ չեն իրագործած այդ ուղղութեամբ։ Փոքրիկ Հելվետիան ամենէն փայլուն կերպով է հասկցեր արդարադատութեան բարձր և խորունկ նշանակութիւնը։ Անոր „*Tribunal de Justice*"-ը —Արդարութեան Ատեանը, որ կը բարձրանայ Լոզանի գեղեցիկ պարտիզին մէջ—առանձնացած ու մեկուսի—Լեմանի և խրոխտ Ալպերու հանդէպ՝ կը խորհրդանիշէ դատաստանի անկախութիւնը։

Այս էապէս դատաստանական հիմնարկութենէն բացի՝ գոյութիւն ունի նաև Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներու „*Cour Suprême*"-ը — Գերագոյն Ատեանը, որ նոյնպէս անկախ դատաստանական մարմին է և որ սակայն, օրէնսդրական-գործադիր իշխանութիւն ալ հանդէս կը բերէ... Բայց արդարադատութեան զարգացման և իրական անկախութեան համար անհրաժեշտ է հանել դատաստանական իշխանութիւնը գործադիր իշխանութեան տնօրինութեան սահմաններէն։ Այս մտքով՝ ներկայիս պետութիւններու մէջ փոքրիկ սաղմեր և նշաններ կան։ Ժողովուրդը, հասարակութիւնը իբրև անկախ և ընդհանրապէս աւելի խղճմիտ տարր, քան պաշտօնէութիւնը՝ կը կանչուի ներկայ ըլլալու դատերուն և իր կարծիքը յայտնելու։ „Երդուեալներու դատը" այսպիսով մինչև մէկ աստիճան արդարադատութիւնը կը հանէ պաշտօնական բացառիկ ազդեցութեան շրջագծէն և կը գնէ հասարակական հսկողութեան ներքև։ Աւելի ռամկավար երկիրներու մէջ դատաւորներէն մէկ մասը կ'ընտրուի ոչ թէ կառավարութենէն, այլ անմիջապէս ժողովրդէն։ Բայց բոլոր այս հատակոտոր իրողութիւնները և մեկուսացեալ փաստերը—որոնք նոյնիսկ Ռուսաստանին մէջ կը պատահին — անզօր են արդարադատութեան գործը կառավարական ազդեցութենէն հանելու և անոր հարկաւոր անկախութիւնը տալու։ Որպէս զի դատաստանը իրապէս բարձր մնայ—ռամկավարութեան համոզմունքով—անհրաժեշտ է, որ բոլոր դատաւորները և դատական բովանդակ իշխանութիւնը ոչ մէկ կապ ունենան կառավարութեան հետ. որ ատոնք բոլորը ընտրուին և պաշտօնի կոչուին միմիայն ժողովրդէն։ Երբ որ դատաւորները այլ ևս նիւթական շահերով, երկիւղով կամ ակնկալութեան յոյսերով ոևէ առընչութիւն չունենան կառավարութեան, գործադիր իշխանութեան հետ, երբ որ անոնք կապուին միայն ժողովրդին և օրէնսդրական գերագոյն մարմնին—արդարութեան նուրբ գործը ինքնին զգալի կերպով կը յառաջանայ։ Ասկէ զատ՝ ռամկավարութեան պահանջին համաձայն դատաւորները պիտի ըլլան անփոփոխելի և մինչև մահը. Անիրաւութեան, անարդարութեան, յանցանքի պարագային անշուշտ անոնք—ամեն քաղաքացիի պէս — դատի կը հրաւիրուին, բայց քանի որ այդ արդ-

գելքները չկան՝ դատաւորները միշտ անձեռնմխելի պիտի մնան։ Արդարադատութեան անկախութեան տեսակէտով այս անփոփոխելիութիւնը կարևոր է։ Դատաւորը պիտի գիտնայ, որ ինքը միայն արդարութեան կը ծառայէ։ Անիկա հոգեբանօրէն պէտք է ազատ և անկաշկանդ ըլլայ։ Արտաքին աշխարհի, շրջապատի ոչ մէկ երկիւղ, պաշտօնի ոչ մէկ մտահոգութիւն, իշխանաւորի ոչ մէկ սաստ պիտի չ՝աղարտեն անոր խիղճը ու պիտի չբռնաբարեն անոր կամքը, որ կոչուած է քննելու արդարութիւնն ու յանցանքը.

Նոր Թիւրքիան հսկայական գործ ունի կատարելու այս ճանապարհի վրայ։ Բացարձակ միապետութեան, համիդականութեան տխրահռչակ դատը ամեն ինչ աւերելով այդ երկրի մէջ՝ խորապէս ցնցեր է նաև արդարութեան հիմքերը։ Հոս չենք կրնար թէկուզ համառօտ պատկերը ներկայացնել այն սարսափելի ու ահաւոր յանցանքներու, որ գործեր է ինքը կառավարութիւնը, ինքը պետութիւնը Թիւրքիոյ չարաշուք երկնքի տակ։ Այդ յանցանքները անթիւ են և անօրինակ։

Նոր Թիւրքիան կանգնած է այսօր ոչ միայն հին Թիւրքիոյ մեղքը քաւելու անհրաժեշտութեան առջև, այլ և հիմնականապէս բուժելու այն վատառողջ, ցաւագար դատաստանական սիստեմը, որ իրեն բաժին է ընկած հին ռէժիմէն։ Առանց այս կարևոր աշխատանքին՝ նոր Թիւրքիոյ վերածնունդը անկարելի է երևակայել... Սահմանադրական իրաւակարգի յայտարարութեան հետ միասին, այո՛, քաղաքական բանտարկեալները ազատուեցան շղթաներէն։ Սակայն այս տարրական և անհրաժեշտ արդարութիւնը հեռզհետէ աւելի չկատարելագործուեցաւ։ Երկրին մէջ դատարանները տակաւին կը պահպանեն իրենց վաղեմի կնիքը, իրենց հնաւանդ սկզբունքը։ Նոր քաղաքակրթութեան ու պետական նոր իմաստութեան ըմբռնումները չեն անցներ և չեն ներգործեր դատական սիստեմին, հիմքերուն, խորխներուն, որոնք անդառնալիօրէն հին կը մնան։

Կրօնական, ցեղային, ազգային հաւասարութեան և անխտրականութեան սկզբունքները, որ նոր Թիւրքիան բարձրաձայն ազդարարեց՝ պէտք է վերջապէս իրագործուին ու պէտք է վերջապէս վերակազմեն դատական խարխուլ և անիրաւ շէնքը։ Եթէ պետութիւնը կը հիմնէ բոլոր օսմանցիներու ազատութեան գաղափարին վրայ՝ պէտք է անոր դատարանները նախ և առաջ մարմնացնեն արդարութիւնն ու հաւասարութիւնը բոլոր կրօններու և բոլոր ազգերու համար։ Այլ ևս մահմեդականի ու քրիստոնէի արդարութիւն չպիտի ըլլայ, այլ ևս թիւրքի, արաբի, հայի, բուլգարի տարբեր իրաւունք չկայ—այլ պիտի տիրէ մէկ ընդհանրական արդարութիւն և մէկ ընդհանրական իրաւունք։ Նոր Թիւրքիան պիտի ըմբռնէ այս ամենը և պիտի արդարադատութիւնը հանէ, ազատագրէ կրօնական կապանքներէ և դաւանական նախապաշարումներէ... Արդարութեան բոլոր այն տրամադրութիւնները, որոնք կուգան այս կամ այն կրօնական գրքէն և որոնք խտրութիւն կը դնեն „հաւատացեալի“ և „անհաւատի“ միջև—պէտք է իբր պետութեան վերածնունդին և վերակազմութեան թշնամի տարրեր՝ մէկ կողմ նետուին վերջապէս։ Նոր Թիւրքիան չէ կարող յառաջադիմել, չէ կարող ապրել այդպիսի երկւորեակ, կասկածելի արդարութեամբ...

Ժամանակակից միապետութիւններու կեանքին մէջ կարևոր տեղ կը բռնէ թագաւորին անձնաւորութիւնը։ Սահմանադրական կարգերու իրականացումով՝ անոր անմիջական ազդեցութիւնը պետական կառուցուածքի վրայէն բաւականաչափ տեղի տուաւ։ Բայց և այնպէս, ամենուրեք, թէ օրէնսդրական, թէ գործադիր և թէ պատահական իշխանութիւններու մէջ այսօրուան թագաւորը նշանակելի մասնակցութիւն ունի։

Պարլամենտին որոշումներուն վրայ կրնայ որոշ արգելք դնել. ան պէտք է օրէնքները հաստատէ, հրատարակէ. ան կրնայ ժողովրդական ներկայացուցչական մարմինը ցրել և նոր ընտրութիւններ նշանակել։ Գործադիր իշխանութեան բարձրագոյն պետը կը նկատուի ան. նախարարները անիկա պաշտօնի կը կանչէ. անոնց կողմէ երդում կ՝ընդունէ. որոշ երկիրներու մէջ միայն անոր առջև տեղի կունենայ նախարարներու պատասխանատուութիւնը։ Դատական գործերու աւարտումէն ետքը ինքը միայն կրնայ—օրէնքներու տրամադրութիւններէն անկախ—ներել որոշ յանցանքներ, մեղմել որոշ պատիժներ։ Այսպիսով թագաւորը միաժամանակ և՛ օրէնսդրական, և՛ գործադիր և՛ դատական իշխանութիւն կը հանդիսանայ։ Ասկէ զատ՝ պատի, յարգանքի, խոնարհութեան մէկէ աւելի պարտականութիւններ կան, որ ամբողջ երկիրը պէտք է տածէ դէպի թագաւորին անձնաւորութիւնը։ Բազմաթիւ ծախքեր, աւելորդ և անօգուտ սպառումներ, պալատական անբարոյ և շռայլ կեանք, թունաւորիչ մթնոլորտ. ամբողջովին հակաժողովրդական անձնաւորութիւն և հակառամկավարական բարքեր..

Քաղաքական բնաշրջումը մինչև այսօր շատ բան փոխելով պետական կեանքի մէջ՝ չէ կրցեր, սակայն, պատմութեան արխիւը նետել այդ ժամանակավրէպ գոյութիւնը։

Եթէ հեռաւոր դարերու մէջ թագաւորը և թագաւորական ընտանիքները հանդէս են բերած երբեմն իրօք գնահատելի յատկութիւններ, եթէ ժողովուրդը ինքը յաճախ լուռ համաձայնութեամբ կամ արտայայտուած ցանկութեամբ ընդունած է անոնց միապետութիւնը — այսօր ոչ թագաւորը և ոչ իրենց ընտանիքները ոչնչով բարձր չեն շրջապատող հասարակութենէն՝ ըլլայ քաջութեամբ, հերոսութեամբ, առաքինութեամբ, խելքով թէ բնաւորութեամբ։ Ընդհակառակը՝ այսօր պատմական-ընկերաբանական ճշմարտութիւն է այն, որ թագաւորական ընտանիքները ժամանակի ընթացքին մէջ այլասերուեր, խեղաթիւրուեր, այլանդակուեր են։ Այս հետաքրքրական երևոյթը սօցիօլօգներու և բնախօսներու կողմէ զանազան բացատրութիւններու տեղիք է տուած. ոմանք խոշոր դեր կը յատկացնեն փակ, կղզիացած, ջերմանոցային կենցաղին, ոմանք՝ արիւնակցական մօտիկ կապերին և անսանձ սեռական կեանքին։ Իրողութիւնը շեշտուած է այսպէս թէ այնպէս։

Եւ այն ժամանակ, երբ հասարակութիւնը իր զարգացումով անչափ հեռացեր է թագաւորէն. այն ժամանակ, երբ ամեն պատահական ընտանիք և ամեն պատահական անձնաւորութիւն թագաւորական ընտանիքէն և անոր անձէն բարձր է ու արժանաւոր, պետութիւններու դահոյքին վրայ — տարօրինակ ու անհասկանալի թիւրիմացութեամբ—այդպիսի անձեր կը հանգ-

չին... Պատմութեան տխուր, ողբերգական էջերէն է այս։

Ռամկավարութիւնը քաղաքական հին արժէքներու իր ցնցող քննադատութեան մէջ՝ չմոռցաւ նաև այս այլասերուած դահակալները։ Անոնց աստուածային ծագումը, աստուածային իրաւունքը, աստուածային տիրապետութիւնը ուժգին բացասման դատապարտուեցան։ Մարդկութիւնը, լուսաւոր, յառաջադէմ, բարոյական մարդկութիւնը չի կրնար հանդուրժել այդ էակներու ամօթալի իշխանութեանը։

Եւ այսպէս. հանրապետութեան ձայնը լսուեցաւ։ Ռամկավարութիւնը բազմաթիւ ճակատամարտերու մէջէն՝ առաջ տարաւ իր արդար պահանջը։ Միապետութեան կառափնարանները տնկուեցան, հրացանները պատրաստուեցան, դժոխային մեքենաները լարուեցան հանրապետութիւններու ընդդէմ.. և սակայն գաղափարը, արդարութիւնը չմեռաւ։

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, Հարաւային Ամերիկայի լատին հանրապետութիւնները, Հարաւային Ափրիկէի հանրապետութիւնը, մեծանուն Ֆրանսան, պատմական Զուիցերիան, մանուկ Փորտուգալիան... Այս բոլորը անդրդուելի կերպով կ'ապացուցանեն այն, որ միապետութիւնները — բացարձակ թէ սահմանադրական — դատապարտուած են բնական, անխուսափելի մահուան և որ ապագան՝ քաղաքական բնաշրջման մէջ՝ հանրապետութեանն է։ Անկասկած՝ դիւրութեամբ և կարճ ժամանակի մը մէջ նախկին բացարձակ միապետութիւնները կամ թեկուզ սահմանադրական միապետութիւնները չեն կրնար հանրապետութիւն դառնալ։ Ասոր համար անհրաժեշտ են մեկէ աւելի պայմաններ։ Իրական ուժերու համապատասխան փոխյարաբերութիւն, տնտեսական, հասարակական, պատմական բարձրացող պարագաներ։ Բայց մէկ բան պարզ է—կառավարութիւնները դէպի հանրապետական ձևը կ'ընթանան։ Այսօր այդ շարժումը կը ծաւալի ամենուրեք։ Բոլոր այն քաղաքակիրթ երկիրներու մէջ, ուր հանրապետութիւն գոյութիւն չունի տակաւին՝ հանրապետականներու թիւը մեծաքանակ է։ Միապետական պարլամենտներու կուսակցութեանց շարքին մէջ անոնք նշանակելի տեղ կը գրաւեն։ Ընկերվարական կուսակցութիւններն ամեն տեղ և ամբողջապէս հանրապետական են, չհաշուելով տակաւին բուրժուա հանրապետականները։ Կեանքը լի յոյսերով, ապագայ յաղթանակին ակնկալութիւններով և անցեալին փորձերով սրտապընդուած առաջ կերթայ...

Ի՞նչ դիրք պիտի բռնէ նոր Թիւրքիան այս համաշխարհային շարժման հանդէպ. շարժում, որ շատ երկիրներու մէջ պակուեր է յաջողութեամբ. շարժում, որ բոլոր պարլամենտական, անգամ ոչ-պարլամենտական իրաւակարգերու ներքև կ'ապրի և կը զարգանայ։ Երիտասարդ Թիւրքիան անշուշտ մեծ դժուարութիւններ ունի իր առջև։ Երկրին յետամնաց տնտեսական և մտաւոր վիճակը։ Իրական անհրաժեշտ ուժերու բացակայութիւնը։ Բայց այս բոլորը անանցանելի չեն։ Եւ մենք կը կամենայինք, որ այս ամենի հետ տեղի թէ անտեղի չկրկնուէր նաև հոչակաւոր կրօնական արգելքը։

Թիւրքիոյ թէ բարեկամները և թէ հակառակորդները, ամեն անգամ, ըստ հինաւուրց սովորութեան, մէջտեղ կը նետեն այդ աւանդական միտքը, երբ խօսելու ըլլան օսմանեան երկրին ապագային, անոր յառաջադիմութեան մասին։

Կրօնքը շատերու կարծիքով — և պէտք է ըսել բաւարարաչափ չհիմնաւորուած կարծիքով—եղած է Թիւրքիոյ բոլոր չարիքներու պատճառը։ Անիկա պիտի կանգնէ նաև անոր քաղաքակրթութեան դէմ՝ միշտ թշնամի ու անբարեացակամ։

Մեր յօդուածներու շարքին մէջ մահմեդականութեան պատմական դերով և անոր ազդեցութեամբ առանձնապէս պիտի զբաղինք։ Այժմ կը կամենայինք երկու խօսք միայն ըսել այն տրամադրութիւններուն վրայ, որ հանդէս կը բերէ մահմեդական ուսմունքը քաղաքական փոփոխութիւններու հանդէպ։

Երկու տարի ասկէ առաջ, երբ Թիւրքական Յեղափոխութիւնը, որոտընդոստ ու յաղթական, կարշաւէր դէպի Համիդեան ապարանքը, երբ նոյն այդ Յեղափոխութիւնը, իր իրական ուժերով, կրցաւ տապալել սուլթանը՝ գահընկէցութեան համար, սակայն, ասպարէզ եկաւ մահմեդական կրօնքին ներկայացուցիչը և յանուն այդ կրօնի կատարեց անկման գործողութիւնը։ Թագաւորները—այդ ուսմունքի համաձայն—բացարձակապէս անփոփոխելի չեն և անհրաժեշտ պարագային կրնան թաւալիլ իրենց գահոյքի բարձունքներէն։ Հետաքրքրական է նաև այն տրամադրութիւնը, որով մահմեդական կրօնքը կը թոյլատրէ նոր սուլթան ընտրել ուրիշ ընտանիքներէ, եթէ թագաւորող ընտանիքին մէջ յարմար թեկնածու չկայ։

Արևելքի գործերուն ծանօթ ռուս ռուս հրապարակագիր Բ է լ օ ւ ս ո վ, իր մէկ ուսումնասիրութեան մէջ—տպած ռուսական նշանաւոր ամսագրի մը մէջ 1909 թի գարնան — այն կարծիքը կը յայտնէ, թէ մահմեդական կրօնքի այդ տրամադրութիւնը ինքնին հանրապետական է։ Եթէ չկամենանք համաձայնիլ ռուս գրողի ընդհանրացման հետ՝ պիտի ընդունինք գէթ, որ թագաւորող անձի և ընտանիքի փոփոխութեան ու ընտրութեան տրամադրութիւնը ինքնըստինքեան բաւական նշանակելի է։

Քրիստոնէական կրօնը — այս հարցի նկատմամբ — այդքան բան գոնէ հանդէս չէ դրեր և սակայն քրիստոնեայ ազգերը առանց կրօնական դժուարութեան ընդուներ են հանրապետական վարչաձևը։

Ամեն բան կախեալ է Թիւրքիոյ իրական պայմաններէն—տնտեսական, մտաւոր, հասարակական, քաղաքական վերածնունդէն։ Երբ նոր սերնդին անկաշառ և միահամուռ ջանքերով Թիւրքիոյ ընդհանուր մակերևոյթը բարձրանայ—հանրապետութիւնը այլևս սարսափելի չի ներկայանայ և կը նկատուի իբրև քաղաքակիրթ պետութեան մը համապատասխան ձև...

—

Հանրապետական վարչակարգին մէջ թագաւորի անձնաւորութեան փոխարէն առաջ կուգայ նախագահին անձնաւորութիւնը։ Վերջինս կ'ընտրուի կամ անմիջապէս ժողովրդէն, ինչպէս Միացեալ Նահանգներու մէջ, կամ պարլամենտական մարմիններէն, ինչպէս Ֆրանսա։ Որքան ալ ժամանակակից հանրապետութիւնները ձգտած ըլլան ամեն կերպ խզել միապետական իշխանութիւններու հետ, որքան ալ անոնք ռամկավարութեան մեծ սկզբունքները աշխատած ըլլան իրագործել ներկայիս

պետական կարգերու ներքև—այնուամենայնիւ նախագահները յաճախ թագաւորական բոլոր իրաւասութիւններն ունին։ Թէ Ֆրանսա և թէ Մանաւանդ Միացեալ Նահանգներու մէջ նախագահը օրէնսդրական — գործադիր—դատական նշանակելի արտօնութիւններ կը վայելէ։ Պարլամենտին որոշումները կրկին քւէարկութեան առաջարկել, ծերակոյտին հետ պատգամաւորներու դահլիճը լուծել, նախարարութիւն կազմել, դատաստանով պատժուած յանցաւորներու ներում շնորհել, պատիժները մեղմել—թագաւորական այս բոլոր առանձնաշնորհումները միաժամանակ Ֆրանսիական նախագահին իրաւունքներն են։

Բուրժուական տիրապետութեան տեսաբանները կաշխատին ապացուցանել, որ ամեն մէկ ժողովուրդ, ամեն մէկ հասարակութիւն պէտք ունի եթէ ոչ ժառանգական, գէթ ընտրուած „հայրերու“ և որ առանց այդ հայրերու երկիրը որբ է և անմխիթար։ Բայց այս բոլորը իրապէս հեգնութիւն է միայն։ Նախագահներու այդ իրաւունքները ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ միապետական կարգերու տխուր մնացորդներ, անցած հասարակութիւններու աւելորդ ու վնասակար վերապրումներ, որ տիրապետող դասակարգերու շնորհիւ կը շարունակեն յարատևել հանրապետական կարգերու տակ։

Ապագայ պետական ձևը ոչ մէկ կերպով պիտի հանդուրժէ միապետութեան այդ տաղտկալի հետքերուն։ Այսօր ալ, Հելվետեան փոքրիկ հանրապետութեան մէջ, նախագահը ոչ մէկ արտօնութիւն կը վայելէ։ Կ'ընտրուի մէկ տարի ժամանակով միայն և հետևեալ տարին, առանց ամենաչնչին ազդեցութեան, կը հեռանայ իր պաշտօնէն։ Եւ զուիցերացին ոչ իսկ կը հետաքրքրուի այդ մարդով ու յաճախ անունն անգամ չի գիտենար։ Սոսկական նախագահ է ան, որպիսին կունենայ ամեն ընկերութիւն, և բնաւ զուիցերական ազգի „հայրը“ չէ... Ռամկավարական հասարակակարգի մէջ ժողովուրդն ինքը պիտի ըլլայ իր տէրը։ Ան ո՛չ ժառանգական և ո՛չ ընտրուած, ոչ ինքնակոչ և ոչ կոչուած „հայրերու“ պէտք ունի։

Քաղաքական բնաշրջման ընթացքը պարզ է և որոշ։

Բռնապետութիւն, բացարձակ միապետութիւն, սահմանադրութիւն, սահմանադրական միապետութիւն, հանրապետութիւն...

Դարերու երկարատև ոլորտին մէջ այդ բոլոր ձևերը թաւալելով, գալարելով եկեր հասեր են ռամկավարական հանրապետութեան։

Պատմութեան անցած ճանապարհը դիտելով՝ այսօրուան մարդկութիւնը իր առջև միայն ռամկավարական հանրապետութիւնը կը տեսնէ՝ իբրև իդէալ և իբրև իրագործում։ Կեանքին հրահանգն է այս և ընկերական գիտութիւններուն վճիռը...

—

Մենք վերջացուցինք քաղաքական պրօբլէմին քննութիւնը։ Կանք չ'առնելով մանրամասներուն վրայ՝ մենք աշխատեցանք խնդիրը ներկայացնել իր էական գծերով և ընդհանուր հիմքերով։ Թիւրքիայէն զատ՝ մենք այս մասին մէջ կարևոր տեղ տուինք միջազգային կեանքին։ Քաղաքական բնաշրջման ընթացքը ներկայացնելու համար տիկա անհրաժեշտ էր։ Մենք փորձեցինք ցոյց տալ, թէ Թիւրքիան —քաղաքական տեսակէտով — ի՛նչ տեղ կը գրաւէ պետութիւններու շարքին մէջ և թէ ան ի՞նչ ուղղութեամբ պիտի իր կեանքը կատարելագործէ։

Մինչև այստեղ մենք գիտութեամբ չշոշափեցինք ֆեդէրացիայի խնդիրը։ Նկատելով, որ այդ հարցը իր էութեամբ ազգային պրօբլէմի մէկ կողմը կը կազմէ, մենք վերապահեցինք այդ գլխին։

Մեր յօդուածներու հետևեալ մասերը կը նուիրենք կրօնական, ցեղային, ազգային և դասակարգային պրօբլէմներուն, որոնք աւելի անմիջապէս և ուղղակի կը ներկայացնեն Թիւրքիան և անոր իդէալները...

ՀԱԶԻԱԳԻԻՏ ՏՕՆ

(ՄԻ ԱԶԳԻ ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆԸ)

—

Իտալիան տօնում է իր վերածնութեան յիսնամեակը։

Տուրին, Հռօմ, Ֆլորենցիա — Պատմական հայրենիքի պատմական մայրաքաղաքները — պարզում են այսօր հեռաքրքիր աշխարհի առաջ իրենց գեղեցիկ հանճարների արգասիքը, իրենց բովանդակ հմայքը։

Միքել Անջելօի և Դանտէի վշտահար ուրուականները սաւառնում են այդ շքեղ հանդէսների վրայ՝ Մաձզինիի, Գարիբալդիի կարմրավառ էմբլեմների հետ։ Եւ ցնծում է ամբողջ Ապենինեան թերակղզին՝ հայրենասիրական գինովութեան մէջ։

Յիսուն տարի առաջ կատարուեց — մի „հրաշք“։ Ստեղծուեց մի նոր ազգ, բարձրացաւ մի նոր տարբ համաշխարհային էւոլիւցիայի թատերաբեմում—ի տ ա լ ա կ ա ն ա զ գ ը։ Առաջ նա չը կար։ Կային այլատարբ բեկորներ միայն, այնքա՜ն տարբեր իրենց հատուածային առանձնայատկութիւններով, լեզուով ու բարքով... „Իտալիա“ անունը լոկ աշխարհագրական արտայայտութիւն էր... և ոչ միայն ըստ Մետերնիխի։

Հռօմի աշխարհակալող կայսրութեան անկումից յետոյ, այդ մեծ երկիրը, ինչպէս յայտնի է, բաժանուել էր բազմաթիւ հատուածների, որոնցից իւրաքանչիւրը կազմում էր զատ, ուրոյն պետութիւն։

Եւ մի դարաւոր, անհաշտելի հակամարտութիւն — այդ փոքրիկ պետութիւնների մէջ... Քանի՜ փորձութիւն, քանի՜ արիւնոտ, եղբայրասպան պատերազմներ։ Ցիշենք միայն այն սոսկալի դարաշրջանը, որ պատկերացրել է „Աստուածային Կատակի“ տիեզերահռչակ հեղինակը.. որ նա ողբացել ու անիծել է դժոխապատում իր գրչով, սասանեցուցիչ ոճերով...

Այդ բեկոր-բեկոր և հակամարտ կացութիւնը յարատևեց մինչև 19-րդ դարը. Սիցիլիա, Նապոլ, Հռօմ, Ֆլորենցիա, Պիզա, Վենետիկ, Ջենօվա, Տօրինօ—մի մի անկախ, կղզիացած օճախներ, իւրաքանչիւրը հզօրապէս նախանձախնդիր իր ուրոյն աւանդութիւնների, իր փառքերի։ Բնութիւնը իր կողմից նպաստաւորում էր այդ պառակտումը։ Կլիմա, աշխարհագրական դիրք ցեղային տարբերութիւն — մի մի հզօր անջրպետներ... Նրանք խաղացել են իրենց դերը և ուրիշ ազգային գիտակցութիւնների կազմաւորման պրոցէսի մէջ...

Այո, չը կար անգամ—ընդամենը մի դար առաջ—ընդհանուր ազգային լեզու, խօսուն լեզու։ Հին իտալականը — մեր գրաբարի պէս — մոռացած մի

գոյութիւն էր. նրանով գրում էին սակաւաթիւ մտաւորականներ, բայց նրանով չէին խօսում։

Ի՞նչ զարմանք՝ որ ազգային միութեան գաղափարն ևս երկար ժամանակ գոյութիւն չունէր զանգւածների մէջ։ Նոյնիսկ 19-րդ դարի առաջին կիսում նա դարձեալ միայն փոքրաթիւ „ռանձնաշնորհեալների“ սեփականութիւն էր։

Առանձնաշնորհեա՛լ... Այս բառը սովորաբար գործածւում է՝ վատ, բացասական իրողութիւններ թարգմանելու համար։ Նրանով որակւում են սովորաբար աշխարհի տէրերը, ժողովրդի և Աշխատանքի հարստահարիչները, դահիճները։

Այստեղ նա ունի տրամագծօրէն հակառակ իմաստ։ Այստեղ նա թարգման է ամենաբարձր իրողութիւնների, ամենավսեմ առաքինութիւնների։

Բայց այստեղ ևս „առանձնաշնորհեալը“ „աշխարհի տէրն“ է... Նա այն պ ա տ մ ա կ ա ն փ ո ք ր ա մ ա ս ն ո ւ թ ի ւ ն ն է, որ կարողանում է ամբողջ տասնեակ տարիներ առաջ, երբեմն նոյնիսկ դարեր առաջ, ընդունմարել ապագայի խաւարի մէջ լուսապայծառ „արշալոյսը“. նա այն պատմական փոքրամասնութիւնն է — հերոսների ու տաղանդների հանդիսաւոր բոլքը — որ արտակարգ հոտառութեամբ օժտւած, գուշակում ու նախապատրաստում է անցքերը, դարբնում է համայնքների ճակատագիրը, մաքառում է հազարաւոր խոչընդոտների դէմ, սլանում է փոթորիկների միջից, ամուր գրկած իր գաղափարական և յաղթական դրօշը։ „Առանձնաշնորհեալը“ — դա Դանտէն է, Բուօնարոտտին, դա Մաձձինին է, Գարիբալդին...

Երբ մտնում էք Ջենովայի հնադարեան համալսարանի դռներով, մի հին, մաշւած արձանագրութիւն մուտքի պատին անմիջապէս գրաւում է ձեր ուշադրութիւնը։ Մի կարճ ֆրազ, ընդամենը չորս բառից, նիւրւած ջենովացի մեծ հայրենասէրի — Մաձձինիի — յիշատակին.

Volesti e l'Italia fu!

(Դու կամեցար — և Իտալիան եղաւ)։

Անշո՛ւշտ, ամեն տեղ և ամեն ժամանակ, մարդիկ, յետնորդները իրենց բարեպաշտ խանդավառութեան մէջ տրամադիր են չափազանցնել նշանաւոր ռահվիրաների պատմական կարևորութիւնը, արժէքը։ Իտալացիները ևս մատուցել են առատութեամբ իրենց տուրքը այդ զուտ մարդկային, համաշխարհային տրամադրութեանը։

Բայց կայ և ճշմարտութեան բաժինը այդ խանդավառ ձօների մէջ։

„Ցնո՞րք“... Այդպէս էր հնչում դեռ անցեալ դարու քառասնական ու յիսունական թւականներում „ազգային միութեան“ կոչը Ապենինեան թերակղզու վրայ։ Ի՞նչ մ ի ո ւ թ ի ւ ն կարելի էր իրագործել այդ տխուր Բաբելոնում։ Ի՞նչ ա զ գ ա յ ի ն գ ի տ ա կ ց ո ւ թ ի ւ ն կարող էր մշակւել այդ այլատարը ու հակամարտ հատւածների մէջ...

Միանգամայն սկեպտիկ էին, թերահաւատ և յոռետես։ Զանգւածները — խորապէս անտարբեր և տգէտ ու անշարժ։ Ոչ ոք չէր հաւատում, չէր էլ մտածում։

Բայց հաւատում ու մտածում էր պ ա տ մ ա կ ա ն փ ո ք ր ա մ ա ս ն ո ւ թ ի ւ ն ը։ Հաւատում ու գործում էին մի բուռն Մաձձինիները։ Նրանք գրկեցին ընդհանուր, իտալական ազգի դատը և առաջ անցան... արիւնի ու արհաւիրքի մէջ... Հայրենիքը — մի լայնածաւալ զնդան... Մատնւած աւստրիացիներին, բուրբոններին, միահեծան իշխաններին ու իշխանիկներին։ Դաւադրութիւնը — միակ զէնքը։ Տերրորը — միակ ազդու խարազանը։ „Մենք քչո՞ր ենք, կը նահատակւինք. բայց մեր դիակների վրայ ուրիշները կը քալեն և կը յաղթեն“... Այդ նշանաբանն ընդունեցին իտալացի հայրենասէրները։ Այդ նշանաբանը դարձաւ այնուհետև սեփականութիւն բոլոր ստրուկ ու մարտնչող ազգութիւնների, բոլոր խիզախ, հերոսական փոքրամասնութիւնների։ Այդ նշանաբանով նրանք բարձրացան, յաղթանակեցին։ Տարա՛ն իրենց հետ զանգւածները և կազմակերպեցին հայրենիքը։

* * *

Հրաշք — այո։ Երբ անդրադառնում էք Իտալիայի կացութեան վրայ յիսուն տարի սրանից առաջ, ձեզ միանգամայն զարմացնում է նրա ներկան։ Զը նայած խորունկ տարբերումներին ու տարաձայնութիւններին հիւսիսի ու հարաւի միջև՝ միութիւնը կատարեալ է ամենուրեք. մ է կ ազգ է, մ է կ հայրենիք, մ է կ հասարակական և կուլտուրական գերդաստան։ Կարդուչչիի հայրենաշունչ ոտանաւորները արտասանւում են կրօնական խանդավառութեամբ՝ Ալպերից մինչև Վեզուվի սառորտները, իտալական չքնաղ լեզուն հնչում է Տուրինից մինչև Պալերմո։

Ի՞նչ զօրաւոր ազգակ — այդ լ ե զ ո ւ ն։ Որտե՞ղ չէ եղել նա՝ հզօր, շաղկապող օղակը։ Լեզու և գրականութիւն... Երկուսն էլ վաղուց ի վեր սնուցել են ազգային գիտակցութեան հոսանքը։ Դանտէի օրերից արդէն — 13-րդ դարից — պարարտւել է նա, և առաջ ընթացել յամր ու հաստատուն առաջադիմութեամբ, կղզիանալով սակաւաթիւ „ընտիրների“, գրողների ու բանաստեղծների աշխարհում, բայց հետզհետէ ընդլայնելով իր շրջանը, հետզհետէ ճոխանալով ու գեղեցկանալով։ Լեզուն, գրականութիւնը — եթէ կարելի է այսպէս արտայայտւել — եղել են նախակարապետ իտալական ազգային շարժման. նրանք ներշնչել ու տոգորել են յեղափոխական փոքրամասնութեան։

Զը մոռանա՞նք և պ ա տ մ ո ւ թ ի ւ ն ը, հին, փոռահեղ աւանդութիւնները։ Իտալական բոլոր գրողները, բանաստեղծները ու արւեստագէտները, Պետարքից ու Դանտէից մինչև Ալֆիերի ու Կարդուչչի՝ գտնւել են այդ եզակի պատմութեան, այդ վսեմ աւանդութիւնների թովքի տակ։ Նրա ազդեցութիւնը կրել են և ռազմիկները — առաջին կարբոնարիներից մինչև մեծ, „տիեզերական ասպետը“։ Այդ տիրական հմայքի տակ էր Գարիբալդին, երբ կռւում էր պատմական Հռոմի փլատակների մօտ։ Զէնքի ու զրահի շառաչիւնի մէջ՝ նա մի վայրկեան չէր թոթափում հայրենեաց հին ու պանծալի յիշողութիւնները և կռւի դաշտից գրում էր իր անզուգական — նոյնպէս պատմական — Անիտային.

„Մեր կեանքի իւրաքանչիւր ժ ա մ ը այստեղ Հռոմում՝ համարժէք է մի դ ա ր կեանքի“. „*Un ora della nostra vita in Roma vale un secolo di vita!*“։

* * *

Քաւսից ստեղծւեց կուռ, ամբողջական ա զ գ ա յ ի ն պ ե տ ո ւ թ ի ւ ն ը և այսօր նա հանդէս է գալիս,

որպէս ծանրակշիռ մի գործօն արևմտեան պետութիւնների համաստեղութեան մէջ։ Ռազմական զօրութեան հմայքը չէ դա, այլ մի ուրիշ, աւելի ժամանակակից ուժի—ռամկավարութեան։ Իտալիան ոչ միայն կազմակերպուեց, իբրև ազգային ներդաշնակ պետութիւն, այլ և առաջին քայլերից իսկ՝ ուղղեց իր առաջադիմութեան անիւը ռամկավարական հոսանքի աւազանով։ Եւրոպայի մեծ պետութիւնների շարքում—հանրապետական Ֆրանսիայից և par excelence սահմանադրական Անգլիայից յետոյ — Իտալիան գալիս է, իբրև երրորդ ռամկավարական երկիրը։ Դեռ շատ բան է պակասում նրան, անտարակոյս, դեռ չը կայ նոյնիսկ ընդհանուր ընտրողական իրաւունքը (նա չը կայ տակաւին և Անգլիայում), դեռ թշառութիւնը ոռնում է քաղաքներում ու դաշտերում—մանաւանդ հարաւում—մերկ, տգէտ ու կիսաքաղց զանգուածների մէջ... Բայց շատ բան էլ արդէն իրագործուած է համեմատաբար կարճ ժամանակամիջոցում... Ի՞նչ է յիսուն տարին մի ժողովրդի զարգացման պատմութեան մէջ...

Զուտ պարլամենտական կարգեր են. մամուլի, խօսքի, խղճի, դաւանանքների գումարումների ազատութիւնը համարեա կատարեալ է և թագաւորը ամեն կերպ ձգտում է մնալ իր սահմանափակ լիազօրութիւնների մէջ, հեռու ամեն տեսակ միջամտութիւններից, ինքնահաւան և մեծադղորդ ցոյցերից, որոնցով այնքան յաճախ փայլում է իր դաշնակից Կայզէրը։ Վիկտոր Էմանուէլ III-ը մէկն է այն սակաւաթիւ վեհապետներից, որոնք ըմբռնել են ժամանակի ոգին, որոնք գիտեն, որ էվոլիւցիայի ալիքը մղում է ճակատագրօրէն, անդիմադրելիօրէն դէպի կատարեալ ժողովրդապետութիւն և որ այդ հոսանքի առջև տնկուած բոլոր պատնէշները արհեստական են, երերուն, ժամանակաւոր։ Եւ խոհեմ թագաւորը ինքն էլ ձգտում է ընդառաջ գնալ ռամկավարացման այդ անխուսափելի հոսանքին, մօտենալ, շփուել ժողովրդի հետ, հաշտեցնել—որքան այդ հնարաւոր է—իր արքայական լիազօրութիւնները դեմոկրատիզմի պահանջների հետ։

Պարլամենտն է—Իտալիայի տէրը։ Նա է իսկական թագաւորը, երկրի ճակատագրի տնօրինողը։ Եւ այդ պարլամենտը յիսուն տարուց ի վեր կրել է ահագին կերպարանափոխութիւն։ Ամեն մի նոր ընտրութեան մէջ՝ նա ձախանում է, ռամկավարանում։ Եւ այսօր նրա ձախ թևը կազմում է կուռ ու ստուար մի բանակ։ Այդտեղ բազմած են 85-ի չափ սոցիալիստներ ու հանրապետականներ։ Սոցիալիստները թուով 44 հոգի—կազմում են ամենաազդեցիկ տարրերից մինը։ Ամբողջ երկրում նրանք ծաւալում են պատկառելի եռանդ, գործունէութիւն։ Բաժանուած այլևայլ հատուածների՝ նրանք գործում են իւրաքանչիւրը իր ուղղութեամբ, յանուն նոյն չորրորդ դասակարգի, յանուն ամբողջ աշխատաւոր ժողովրդի, նրա վերջնական ու լիակատար ազատագրութեան։

„Հատուածները“, տարաբախտաբար, ամեն տեղ են. նրանցից չը պիտի խոյս տար նորածին, դեռ ևս յետամնաց Իտալիան ևս։

Զորս-հինգ թև կայ իտալական սոցիալիզմի մէջ։

1. Յեղափոխական սինդիկալիստները (Արտուրո Լաբրիօլա, Լէոնէ, Օրանո և այլն), որոնք դուրս են կուսակցութիւնից։

2. Անհաշտները (Ջիովանների Լերդա, Թրեվ և ուրիշներ, իբրև պարագլուխ), որ ներկայացնում են հին, յեղափոխական, „կատաստրոֆային“ սոցիալիզմը, միացրած, սակայն, օրինական-պարլամենտական գործունէութեան հետ (դրանով և տարբերւում են սինդիկալիստներից)։

3. Ինտեգրալիստներ, կամ „ամբողջական սոցիալիզմի“ կողմնակիցներ (երբեմն Ֆերրիի, այժմ՝ Մորգարիի առաջնորդութեամբ) որ կուզեն հաշտեցնել գործունէութեան բոլոր ձևերը մի համադրական տակտիկի մէջ։

4. Ռեֆորմիստներ, որոնք ունենալով իբրև թէօրետիկոս հռչակաւոր Տուրատիին, ձգտում են իրագործել ըստ կարելւոյն լայն ու արմատական բարենորոգումներ աշխատաւորական կեանքի մէջ, մնալով զուտ լէգալ, օրինական էվոլիւցիայի ճանապարհի վրայ, հեռու „կատաստրոֆային“ ներշնչումներից։

Ռեֆորմիստներ, որոնք սովորաբար հեռու են գնում „ռամկավար տարրերի“ հետ կնքուած համերաշխութեան ճանապարհի վրայ, պատրաստ են ընդունել ամեն տեսակ աշխատակցութիւն, կոմպրոմիսներ, իրաւախոհութիւններ՝ ուրիշ (հանրապետական և արմատական) կուսակցութիւնների հետ, առանց մտահոգ լինելու, որ սոցիալիզմի գաղափարն ու սկզբունքները կարող են տուժել ու դժգունել այդ կոմպրոմիսներից։

Այդ վերջին թևի պարագլուխն է Լէոնիդա Բիսսոլատի, որին նորերս թագաւորը կոչ արեց ստանձնելու մինիստրական պաշտօն և Ջիոլիտտիի հետ վարելու պետական մեքենան։ Մի խոշոր անակնկալ էր դա, որ դեռ շարունակում է յուզել մամուլն ու հասարակական կարծիքը Իտալիայում և ամբողջ Եւրոպայում։

Իտալական սոցիալիզմը պատուով ելաւ այդ փորձութիւնից։ Բիսսոլատին յիշեց թերևս ֆրանսիական անախորժ „նախընթացները“։ Նա յիշեց, անշուշտ, դաւաճան Բրիանին, Թուլմորթ Վիվիանիին ու Միլլրանին։ Նա լաւ գիտէր, թէ ինչպէս մինիստրական կոչումը աղաւաղում, թունաւորում է համեմատաբար մաքուր ու անշահախնդիր հոգիները, թէ ինչպէս դժուար է, գրեթէ անհնարին բուրժուազական ներկայ կարգերում, պարլամենտական ներկայ մեծամասնութեանց հանդէպ՝ մնալ մինիստր և հաւատարիմ սոցիալիստ։ Նա լաւ գիտէ նաև—ֆրանսիական պատմութիւնից—թէ որպիսի պառակտումն է մտցնում սոցիալիստական շարքերի մէջ „միլլրանիզմը“... Բիսսոլատին, լինելով հանդերձ շատ չափաւոր, պատեհական, որոշեց—իր պայծառ մտքի և շիտակ հոգու թելադրութեամբ—խոյս տալ, հրաժարուել վտանգաւոր հրապոյրից. նա գնաց պալատ և դրեց իր „պայմանները“ թագաւորին.

— Ցրուել ներկայ պարլամենտը, նոր ընտրութիւններ հրահանգել. ընդունել ընդհանուր ընտրողական իրաւունքը և մի շարք ուրիշ ծանրակշիռ բարենորոգումներ։

Այդ պայմանով էր Լէոնիդա Բիսսոլատի պատասխանում թագաւորի կոչին։ Իսկ դա հաւասար էր—հրաժարման... քանի որ պայմանները — ինքը լաւ գիտէր — անընդունելի էին։

Այդպէս վերջացաւ. Իտալիայի տարեգրութեան մէջ առաջին անգամ ծայր տուող այդ խոշոր „անակնկալը“։

Դա բարոյական մի նոր վաստակ է նոր հայրենիքի աշխատաւոր ու սոցիալիստ բանակի համար։ Այդ կոչը վերհապեահ կողմից և այդ պատւաւոր հրաժարականը պերճախօս ապացոյցներ են, որ սոցիալիզմը ուժ է Իտալիայում, որ նա—չը նայեած իր ներքին տարաձայնութեան ու տագնապներին — գտնւում է „վտանգաւոր“ ու սպառնագին վերելքի մէջ։

ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Տեղի ունեցաւ անսովոր խանդավառութեան մէջ ֆրանսիական սոցիալիստների 8-րդ համագումարը Սէն-Կանտէն քաղաքում։

Բաբեօֆի ծննդավայրն է։ Եւ բազմահարիւր պատւիրակները պարտք սեպեցին նախ և առաջ՝ դնալ երկրպագել մեծ մարդու և նահատակի յուշարձանին — այն մարդու՝ որ 115 տարի առաջ, իր մի բուռն համախոհների հետ, ըմբոստացաւ բուրժուազական Յեղափոխութեան կեղծիքների դէմ, ցոյց տուեց „հաւասարութիւն“ ու „եղբայրութիւն“ գաղափարների պարտնքը և յաղթական բուրժուազիայի ականջներին առաջին անգամը հնչեցրեց տիեզերական սոցիալիզմի ու ճշմարիտ հաւասարութեան զօղանջը, որի համար և... գլխատուեց։ Անարգ գիլօտինը տարաւ այդ ազնիւ գլուխն ևս, որ տանջւել էր հայրենի աշխատաւորութեան ցաւերով, որ այնուհետև ամբողջ տասնեակ տարիներով մատնւել էր մոռացութեան և որ այսօր ահա նորէն բարձրանում է՝ արդէն ազատ հայրենիքում, արդէն հասուն ու խանդավառ պրոլետարիատով շրջապատւած։

Եւ ոչ միայն պրոլետարիատով։ Այդտեղ են և Ֆրանսիայի զարդ ու պարծանք մտաւորականները — պարլամենտի անդամներ, հոյակապ հռետորներ, գրողներ ու հրապարակախօսներ. այդտեղ են Ժօռէս, Պրեսսանսէ, Ժիլ Գեդ, Վայեան, Սանբա, Կամելինա, Բրակ, Լաֆարգ, Էդգար Միլօ, Ալբեր Թոմա, Կոնստան, Ռընօդել, Դրլապօրտ և այլն։

Մի կատարեալ ապօթէօզ—սոցիալիզմի նախահայր Բաբեօֆին։ Բազմութիւնը հսկայական է, — քաղաքի ամբողջ աշխատաւոր ազգաբնակութիւնը։ Ներկայ է և ինքը քաղաքապետը, որ սոցիալիստ է։ Ինչպէս յայտնի է, ընկերվարականների ձեռքումն է քաղաքապետութիւնը Ֆրանսիայի մի շարք կենտրոններում։ Ալբեր Թոմա, երիտասարդ և շնորհալի պարլամենտական գործիչը, արտասանում է մեծ նահատակի և ռահվիրայի ջատագովականը, ցոյց է տալիս, որ Գրակխուս Բաբեօֆի առաջինը ծանուցեց դասակարգային պայքարի անհրաժեշտութիւնը, ունևորների և չքաւորների ճակատագրական բաղխումը, որ պիտի ծնէր նոր կարգեր, նոր մարդկութիւն։ Թոմա պատմում է „հաւասարների դաւադրութեան“ սրտաճմլիկ գրւագը, ուր մի բուռն հերոսներ, Բաբեօֆի առաջնորդութեամբ փորձում են տապալել հարստապետական կարգուսարքը և իրագործել սոցիալիզմը։

„Դասակարգային կռիւ“ տակտիկը տասնեակ տարիներ յետոյ մարմնացաւ հռչակաւոր սոցիալիստ-յեղափոխական Բլանկիի մէջ, ապա անցաւ և Գերմանիա, արծարծւեց Կարլ Մարքսի և Ինգելսի նշանաւոր մանիֆէստում։

Ի շարս այլ խնդիրների (պարլամենտական հատւածի դիրքը հանդէպ նոր կառավարութեան, ընտրողական տակտիկ, մունիցիպալ գործունէութեան նախագիծ և այլն)—համագումարը ունէր իր օրակարգի մէջ մի չափազանց փափուկ խնդիր, որ և յարուցեց երկար ու տաք վիճաբանութիւն։ Դա „Humanité“ թերթի խնդիրն էր, նրա խմբագրի ու խմբագրութեան կնճիռը։

Դարձեալ հին „Ժօռէսեան“ հարցն էր, որ հրապարակ էր նետւում անուղղակի՝ Ֆանատիկոս և նեղմիտ գեդիստների կողմից։ Եւ այդ պատճառով՝ Սէն-Կանտէնի վիճաբանութեանը խիստ եռանդով ու հետաքրքրութեամբ հետևում էր նաև բուրժուական մամուլը։ Ժօռէսի վարկի ու հմայքի խնդիրն էր—մի մարդու, որ այդ մամուլի կարծիքով, այսօր բուն վարիչն է Ֆրանսիայի ճակատագրի, քանի որ իբր նրա ցանկութեամբ ու թելադրութեամբ է շարժւում նոր դահլիճը, Մոնիի արմատական-սոցիալիստ մինիստրութիւնը։

„Humanité“ թերթի հիմնադիրն ու տնօրէնն է Ժօռէսը և շնորհիւ նրա խմբագրութեան՝ թերթը ութ տարուց ի վեր նուաճել է պատկառելի դիրք, իբրև մեծագոյն սոցիալիստական և աշխատաւորական օրգանը, որ բուրժուա մամուլի ճնշող մրցակցութեան հանդէպ իսկ՝ կանգուն է մնում և ուղղում իր անողորմ շանթերը ոչ միայն Ֆրանսիայի, այլ և Ռուսաստանի, Թիւրքիայի, Սպանիայի, ամբողջ աշխարհի վատ, բռնաւոր, հարստահարիչ ուժերի դէմ։

Չորս տարի առաջ թերթը ծանր ճգնաժամի մէջ էր և ազատուեց կորստից դարձեալ շնորհիւ իր հեղինակաւոր խմբագրի ջանքերին։ Նա կոչ արեց — և նպաստները հեղեղի պէս թափուեցին։ Անհատական օրգանը միշտ աւելի և աւելի դարձաւ կուսակցական, բայց Ժօռէսը մնում էր հոգին, ինչպէս որ նա հոգին է ամբողջ պարլամենտական հատւածի։

Այդ դիրքը շարունակում է ըստ առաջնւոյն նեղել մի քանի աղանդաւորների, որոնք դեռ վաղուց — 12 տարի սրանից առաջ—հերետիկոս ու պատեհապաշտ էին հռչակել տաղանդաւոր առաջնորդին և վճռել էին դուրս վտարել շարքերից։

Այն ժամանակ չ'աջողեցին. այժմ էլ վիժեց նրանց դաւը։ Ուզում էին չէզոքացնել Ժօռէսին՝ թերթի խմբագրութիւնը յանձնելով հաւաքական մարմնի և նոր տնօրէն ընտրելով՝ ամեն տարի։ Այդ տրամադրութեան իբրև խարգման առաջ եկաւ Պոյ Լաֆարդ, Ժիլ Գեդի մօտիկ բարեկամը և ֆրանսիական մարքսիզմի ամենահին պարագլուխներից մինը։ Նա առաջարկում էր թերթի խմբագրական կազմի համար՝ ի միջի այլոց Ռապպոպորտին և Հերվէին։ Մի ողբալի յղացում։ Արդարև, այդ մարդիկ խմբագրութեան գլուխ անցնելով — թերթը հազիւ թէ երկար ապրէր։ „Մառանում են“ ինքնակոչ դատախազները, որ թերթն ապրեցնողը, նրան հիւթ ու սնունդ տուողը Ժօրէսի հրապարակախօսութիւնն է։

Սլաք նետեց Ժօռէսի ու թերթի դէմ և Ռապպոպորտ—մի ուրիշը ֆրանսիական մարքսիզմի սանիկներից, մի անախորժ միջակութիւն։ Նա ակնարկեց, որ իբր թերթին նիւթապէս նպաստել է նաև... բարոն Ռոշիլդ։ Այդ վատ ակնարկի վրայ այնպիսի փոթորիկ բարձրացաւ, որ ձախողակ ազանդաւորը ստիպւեցաւ ներողութիւն խնդրել. դատափետեցին նրան անխտիր բոլորը։

Ականջ չը կախեցին և Լաֆարգի մրմունջներին։ Անդամ գեդիստ Դրլօրի, բլանկիստ Սանբա և բազմաթիւ ուրիշներ վեր հանեցին Ժօռէսի անսովոր ծառայութիւնները և յայտարարելով նրան իրենց „բուռն համակրանքն ու հիացումը“, պահանջեցին, որ Ժօռէս շարունակէ մնալ կուսակցական թերթի դեկավար։ Համագումարը այդպէս էլ հաստատեց։

ԾՐՁԱԲԵՐԱԿԱՆ

(Թեթեւ կրճատումներով արտատպում ենք Եւրոպայի Դ. Ռ. Մ. հրատարակած քառուցիկը)։

ԵՒՐ. Հ. Ց. Դ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Ընկերներ,

Վերջացաւ III Համագումարը։

Մի աւելորդ անգամ ևս նա եկաւ ապացուցանելու Միութեանս կենսունակութիւնը և ամրապնդելու անոր հիմքերը։ Զուր չէ եղած մեր հիմնադիր ընկերներու այնքան գեղեցիկ յղացումը, ընդառաջ գնալու հրամայական պահանջի մը—կազմակերպել անհատ ընկերները — ոչ թէ մի դրօշի տակ, ուր անոնք անհատապէս մտած էին արդէն, այլ անհատներու բաժանւած ուժերը օգտագործելու հաւաքական գործակցութեամբ արդէն նեւրական նպատակի մը իրականացման մէջ, թէև աննպաստ մի հողի վրայ, սակայն խանդավառ բազմութեան մը մէջ։ Զուր չեն եղած նաև մեր ընկերներու ոգևորութիւնն ու անդուլ ջանքերը, որով գրեթէ առանց բացառութեան շտապեր էին գալ Համագումարին՝ իրենց

անհատական փոքրիկ ուժերը միացնելու մի մեծ գործի շուրջ, ատոր համար պահանջուած մեծ ուժը ստեղծելով։

Համագումարը եղաւ արտայայտիչը Եւրոպայի մէջ ապրող, ոգևորուող և մտածող Դաշնակցական Ուսանողութեան։ Այնտեղ պատկերացաւ Միութեանս ամբողջ կացութիւնը։ Ուսանողական այնքան այլազան կեանքը երբեք բեռ մը դարձած չէ մեր այն ընկերներու համար, որոնք մեծ մտածողներու շրթունքէն կախուած, կամ անոնց երկերու մէջ խորասուզուած՝ կարողացած են յամենայն դէպս սիրած գաղափարի յառաջադիմութեան համար գտնել ժամանակ զոհելու և աշխատելու։ Պարբերական հաւաքումները Դաշնակցական մտածողութիւն և մթնոլորտ ստեղծելու նոյն քաղաքի մէջ եղողներու համար՝ ցանկութենէ աւելի, պահանջի պէս զգալի են եղած և դրական արդիւնքներ տուած բոլոր խումբերու մէջն ալ։ Այնտեղ հայկականութեան և գործնական կեանքի բոլոր նշոյլներէն կտրուած ուսանողութիւնը լաւ է թէ ի՛նչ կը կատարի հեռուն, մշուշապատ հորիզոններու ետև, ուր հայկական կեանքն է սփռուած անտէր և բազմակարօտ. կամ մարդկային գերագոյն Մտքի ծաղիկները ինչպէ՞ս կարելի է հաշտեցնել մեր իրականութեան պահանջներու հետ և այնտեղ իբրև լուսաւոր ջահ մը, մեր ապագայ մթագնած ուղին լուսաւորել...

Կուսակցական կեանքը, իր այնքան բազմակողմանի շերտաւորումներու մէջ՝ եղած է բուռն հետաքրքրութեան և ուսումնասիրութեան բևեռը, ու անոր օր օրին ստեղծած հրատապ հարցերը իրենց հրամայական պատասխաններով դարձած են տեսակ մը կապ այն ուսանողութեան համար, որ գիտակցութիւնը ունի տանջուած ժողովրդի մը որդին լինելու և անոր բեռը թեթևացնելու համար ուժ և կարողութիւն ամբարելու։

Համագումարը տեսաւ, թէ ինչպէս տարիներէ ի վեր Դաշնակցութեան ծրագրած համերաշխութեան և համագործակցութեան ջանքերը հարևան ժողովուրդներու հանդէպ մեր ամբողջ Միութեան մէջ յաճախ արդիւնաւոր կերպով իրականացած են՝ մեր ապագայ գործունէութեան համար հիմքեր մշակելով։ Ու յարաբերութիւնները գնալով աւելի կը սղմին ու կը սերտանան ո՛չ միայն Եւրոպայի, Տաճկաստանի, Ռուսաստանի, Պարսկաստանի և գաղութներու հայ ուսանողութեան միջև, այլ և մեր կողքին, մեզ պէս մտածող ու գործող այլ սօցիալիստական և յեղ. ուսանողական կազմակերպութիւններու հետ։ Այս բոլորը առաւել կամ նուազ չափով արտայայտուեցան, վերադնահատման ենթարկուեցան և նոր նոր ծրագիրներու համար հիմքեր դարձան՝ աւելի խորացնելու մեր գիտակցութիւնը, մեր իդէալներու իրագործման մէջ։

Եւ վերջապէս „Ուսանողը“ մեր ա՛յնքան փայփայած և ա՛յնքան արտայայտիչ գործը։ Երիտասարդ՝ մե՛նք ալ, ա՛յն ալ. բայց մեր կարճ գործունէութիւնն ու պատմութիւնը տուած են մեզ պէտք եղած փորձառութիւնը — գոնէ այդպէս կը մտածենք մենք — պակասները դարմանելու և գնելու զայն ցանկալի բարձրութեան մը վրայ. „Ուսանողը“ ոչ միայն մեր արտադրութիւնն է և պատկերացումը, այլ և մեր մէկ մ՛ա ս ը, անբաժանելի և անհրաժեշտ։ Նա դարձաւ խարիսխը մեր գործունէութեան և ա՛լ աւելի ապագայ գործունէութեան։ Համագումարը այնքան ջերմ վերաբերմունք և հոգածութիւն ցոյց տուաւ „Ուսանողի“ հանդէպ, որ անոր վճիռներն ու որոշումները ընդարձակ տեղ մը բռնելով պէտք է երևան գան տարեկան Տեղեկագրի մէջ, որ շուտով լոյս է տեսնելու։

Համագումարը իր աշխատանքները արդիւնաւորած տեսնելու համար՝ ընտրեց համապատասխան Մարմինը։

Գիտակ և պարտաճանաչ իր բոլոր յանձնառումներուն՝ Գործադիր Մարմինը կը կարծէ կատարած լինել Համագումարի իր վրայ դրած պարտաւորութիւնները կոչ ընելով բոլոր ընկերներուն՝ միանալ սիրած գործի շուրջ, ստեղծել եռուն խմբական կեանք, արծարծել և սերտացնել համերաշխութեան կապերը թէ՛ ընկերներու, թէ՛ Սօց. Յեղ. կուսակցութիւններու և թէ՛ հարևան ցեղերու հետ, վերջ տալ անձնական հակամարտութիւններուն, բարձր պահել կուսակցական գիտակցութիւնը և Դաշնակցութեան հոյակապ դրօշը, որու ծածանումներու տակ մենք ալ մեր աշխատութեան բաժինը պիտի բերենք, միշտ վստահ մեր բոլոր ընկերներու աջակցութեան և եռանդի վրայ։

Այս բոլորի համար անհրաժեշտ են՝ գործնական մասնակցութեան հետ նաև տ ե ս ա կ ա ն պ ա տ ր ա ս տ ո ւ թ ի ւ ն, որ մեր ուղղակի պարտականութիւնն է և որու վրայ կը հրաւիրենք մեր ընկերներու ուշադրութիւնը, ի նկատի ունենալով այն միջավայրը, ուր կ՚ապրինք և այն՝ ուր մենք պիտի գործենք իրականացնելու համար մեր կուսակցական իդէալները։

Վստահ ենք, որ մեր ընկերները մեզի հետ միասին ձեռք ձեռքի տուած կը նպաստեն իրագործելու այն ծրագիրները, որ մշակեց III Համագումարը և այնպէս ներկայանալու IV Համագումարին միշտ աւելի գիտակից և պարտաճանաչ Միութեանս և առաւելապէս Դաշնակցութեան պատմական առաքելութեան։

Ընկերական բարևներով՝

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

1911 ապրիլ 15

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Ափրոն ստացած է՝

Լիվրպուլէն՝ Խաչ. Մամասեան 50. 70 Ֆր.:

Սեւ Ծովու Կ. Կոմիտէն՝

1908 նոյեմբեր 25-էն 1910 մայիս 30. — 1908 տարւայ վարչութենէ 1787. 75 ղրշ. (լիրան 103-էն), Կորիւն ենթակոմիտէէն 243. 25, Շահէն ենթակոմիտէէն 250. 75: Հետեւեալ խումբերէ՝ Վարդանեան 168. 25, Վրէժխնդիր 191, Հայկակ 477. 50, Սլաք 260. 50, Ալիս 238 Քաջունի 169. 75, Պարթեւ 134, Կռունկ 102, Վրէժ 81, Դուք 22. 75, Մուրատեան 114, Սարերու 76. 50, Ասողիկ 18, Եփրատ 115, Արաքս-Ափեր 90. 25, Արաքս 222. 75, Եւս 515, Լոյս 74, Կորիւն 241, Կովկաս 659, Բլաքին 103. 25, Կայծակ 52, Ծիածան 92, Լճակ 223. 75, Անձնուէր 10, Շանթարգել 23, Եղջիւր 44, Արմենեան 18, Թորգոմեան 132, Աշոտ Երկաթ 76, Վառօդ 33, Արթուն 127, Վիշապ 183, Ղեւոնդ 19, Ղեւոնդեան 32, Արարատեան 26, Աղեղ 100, Հրաբուխ 226, Կապար 61, Արծիւ 22. 50, Սալմաստ 100, Արշալոյս 162, Ռշտունի 24, Գայլ 338, Նշենիկ 90. 25, Տիգրիս 38, Աղբիւր 222, Թոփչեան 134, Լուսին 58, Աւարայր (կին) 186. 50, Արտավազդ (կին) 50: Գումար 9258. 25 ղրշ.:

Կոմիտէ եւ ենթակոմիտէներէ 1908 — 1910 մայիս 31. — Ռոստոմ 232. 50 ղրշ., Սեւ Կիրճ 250, Անի 390, Լճակ Հրաբուխ 234. 50, Տարօն 85. 50, Քարհատ 206, Սենեքերիմ 270. 75, Պասնէշ 866. 50: Գումար 2454. 85 ղրշ.:

ԶԻՖՕՆԻ համար հանգանակուած.—Հետեւեալ խումբերէ՝ Ղեւոնդեան 154. 50 ղրշ, Մուրատեան 231. 25, Հեղեղ 66. 50, Կապար 88. 50, Վարդանեան 103, Բլաղին 49. 25, Արթուն 82, Վրէժ 89, Կորիւն 309, Արամս 80, Ծիածան 23. 75, Եւս 76, Սալմաստ 66. 50, Հայկազ 515, Կովկաս 1030, Գայլ 150, Ալիս 52. 50, Սլաք 94, Վրէժխնդիր 236. 50: Ռոստոմ կոմիտէէն (3000 լիրան 108-էն) 2861, Մերին Կիլիկիայէն (5 լիրա) 515: Գումար 6873. 25 ղրշ.:

1908—1910 մայիս 30.—Ն ո ւ է ր ն ե ր՝ Ռ. Պ. 2832. 50 ղրշ., Մ. Օ. 2832. 50, Ռ. Շ. 1133, Ն. Ա. 1133, Կ. Փ. 1236, Խ. Գ. 566. 50, Ռ. Գ. 566. 50, Արաքս խումբ 572: Հ ա ս ո յ թ ն ե ր՝ թատերգութենէ եւ նուագահանդէսէ 878, 1908 տարւայ ընթերցարանի պնակէն 144. 25: Գումար 11894. 25 ղրշ.:

Ընդհանուր գումար 30480. 50 ղրուշ:

Վասպուրականի Կ. Կոմիտէն՝

1909 նոյեմբեր 23-ից 1910 նոյեմբերի 10: — Դ ա շ տ ա վ ա յ ր ի հետեւեալ խումբերէ՝ Պահանջող 84 ղրշ. 30 փ., Ռումբ 53, Ուսանող 59. 10, Որսկան 72. 10, Արծիւ 13. 20, Մուզա 215, Ըմբոստ 162, Քնարիկ 77, Լուսին 79, Ծաղիկ 143, Զւարթ 211, Արարատ 14, Զալլաղ 145, Ծիծեռնակ 49. 20, Ալիք-Պայքար 130, Արթուն 6, Ծովասար 77, Որսորդ 56, Վազգէն 309, Ըմբոստ Բ. 94, Հոսանք 39, Շանթ 17, Ազատ Քնար 180, Ծիածան 75, Ռազմիկ 290, Քրիստափոր 21, Հիւրիէթ 208, Ծերուկ 20, Լճակ 216, Թոփչեան 190. 20, Զոհ 36, Կուռք 20. 20, Շանթ Բ. 48, Նուագ 105, Զալլաս Բ. եւ Մրրիկ 19, Ասուպ 48, Մամիկոնեան 12, Փայլակ 30, Գրիչ-Բրիչ 60. 20 ղրշ.: Գումար 3686 ղրշ. 10 փարա: